


Մ Ի Օ Ն

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ԸՉԳԱՅԻՆ • ԲԵՆԵՍԻՐԱԿԱՆ • ԳՐԱԳԻՏԱԿԱՆ
ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ


ՈՒԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ
ՇՐՋԱՆ ՄԻԼՄԵԼՅ



ՅԵՐՈՒՍԱԼԵՄ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

1873



Մ Ի Պ Տ

ՈՒՐՆԵՐՈՐԿ ՏՍՐԻ
ԹԻՒ Տ.

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ՕԳՈՍՏՈՍ 31
1873.

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԳԻՏԱԿԱՆ

ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ ԱԿՆԱՐԿ ՄԻ

Չոր է սատոյի ծառայութիւնն
և սատոյի ազատութիւն :

Մարտս իր խորհելու ազատութեանը մէջ, եթէ մէկ սահման մի չունենայ՝ ստոյգն եւ անստոյգը որոշելու համար, կարծեաց անելանելի ուղիանոսին մէջ իյնալով՝ դուրս ելելը անհնարին կրլայ . և որպէս զի նոյն կարծեաց ուղիանոսին մէջէն զատէ և որոշէ ստոյգը և ճշմարիտը, հարկ անհրաժեշտ է՝ ճշմարիտ սիղուներ, կիրթ ճաշակ և լի հմտութեան . հաւանականագոյն պատճառ , եւ անկողմնակալութիւն ունենալ, և այս է կարծեաց ազատութեան չափ և սահմանը :

Արդ՝ ինչպէս որ խորհելու ազա

տութեան մէջ այսպիսի սահման չունենալով արդարն և անարդարը , ըստոյգը և անստոյգը որոշելու համար , չկրնար խառնիխուռան կարծիքներով օրինաւոր և կարգադրեալ բան մի հանել մարդկային բանաւորութեան արժանաւոր . այսպէս ալ գործելու ազատութեան մէջ, եթէ նոյն ազատութիւնը սահման մի չունենայ , օգտակարը վնասակարէն չկրնար որոշել , և աննշան օգտի՝ մը համար շատերու վերարերեալ մեծամեծ օգտից կը վնասէ : Ուստի մարդկային գործոց օգտակար և վնասակար բլլալուն նկատ

ճամբ կրնանք բսել թէ, անկարելի է որոշ դատադուժեամբ 'ի ծանօթութիւն գալ, եթէ ուղիղ դատումը, համութիւնը և անկողմնակալութիւնը սահման չունենայ. այս սահմանն ալ ուրիշ բան չէ, բայց եթէ չափ մի, կամ լաւ եւս է բսել, կըսութիւն մի, որով կը ճանցուի արժէքը, և կանոն կըսայ յայս կամ յայն կողմ երբէք չի շեղելը՝ իստ որում մարդկային գործքերը ճիշտ լարախաղի ընթացքին նմանելով, իւր երկու կողմերը ահագին անդունդներ ունի, որ եթէ առանց իւր կշռոյն մէտ դնելու ընթանայ, խկոյն կը գլորի. ինչպէս յայտնի կը տեսնուիմք: Ասե կը նմանի մանկան կենացը, ինչպէս որ մանուկ մի եթէ իւր ազատութեանը թողումք, չը կրնալով իւր գործոյն և ընթացից կշիռ դնել, և ըստ այնմ շարժել կը շեղի ընթացքէն և անմիջապէս կը վնասուի երբեմն շատ և երբեմն սակաւ. այս պէս ալ երբ հուրին բով թողումք, դեպ 'ի հուրին յառաջ երթալով իսկոյն կայրի. իսկ եթէ ճշմարտ ազատախոհ մէկը ըլլար պիտի խորհէր, թէ պէտք է այնքան յառաջ երթամ, որ չը պահեմ և ոչ այրիմ:

Իսկ իմաստուն և կատարեալ խա հակմը նախ իւր գործոց ամէն պարագաները կը կշռէ չքահայեցութեամբ ամեն կողմը կը դիտէ, օգտակարը ու վնասակարը բաժ կը կըռռէ, պարտուց եւ իրաւանց կշիռը ձեռքն առած եւ անոր մէտէն սովորած, շեղելու կամ չը շեղելու կողմերը, ուղիղ ընթացքին մէջ կը շարունակէ:

Այժմէ մարդ առանց իւր գործոյն չափ դնելու շարունակէ, անմիջապէս կը վնասուի, եւ միշտ վնասակար է վախճանը և արդիւնքը այն գործոյն, որ աւանց չափի և կշիռքի է. ինչու

որ « Չար է սաստիկ ազատութիւնը », վասն զի չափ չունի, վասն զի անսանձ կարչաւէ և առաթուր կառնէ ընթացքին առջեւ պատահածները, 'ի վնաս իւր անձին և այլոց, « Այլ չար է սաստիկ ծառայութիւնն », ըստ որում նա ալ չափ չունի և ամէն կարողութիւնները կրնայ գերել, որ մարդուն համար անարգութիւն է:

Այսպէս ալ ամէն գործոց մէջ, անսահման ազատն օգտակարը վնասակարէն որոշելու անկարող ըլլալով, մի և նոյն կերպով կ'մըլուի երկուքին ալ, և որն որ նոյն վայրկեանին իրեն լաւ թուի՝ անոր կը միտի: Ինչպէս երբ մանկան առաջը թողումք հուր և վարդ միանգամայն, կերկնայ երկուքին ալ, եւ ընտրութիւն չունենալով վարդը առնելու ատեն խկոյն ձեռքը փուշէն կը խոցուի. և հուրը բռնելով սաստկացէս կայրի. և զինքը արգարայնելու համար կսխի ըսլ, և նորէն կը վնասուի: Այսպէս ալ կատարեալ մարդիկ երբ իրենց գործոցը ու խօսիցը չափ մի չորոշին, երբէք օգուտ մի չեն քաղեր. եւ վասն զի չափ չունեցող գործոյն մէջ, ոչ միայն օգուտ չը նշմարուիր, այլ նաեւ գրեթէ միշտ վտանգներն երբէք չեն սրսխիր. այս ճշմարտուած փորձերէն ստիպեալ ընդունուած է սա սկզբունքը թէ, « Պարտ է յամենայնի զչափ ունելը. և այս սկզբան հետեւութիւնն է, նաեւ ազատութեան և ծառայութեան չափ դնելու դրութիւն, ինչպէս ճշմարտ է նաեւ թէ « Չար է սաստիկ ծառայութիւն և սաստիկ ազատութիւնն »:

Այս ուրեմն ինչպէս մանուկը ըզգոս շացնող հայրը բռնութիւն ըսած չըլլար, նոյնպէս ալ բռնութիւն կամ բռնաբարութիւն չը համարուիր երբ մէկը կը զգուշացնէ զայլս իւր մէկ վնասակար գործէն, մանաւանդ առաւ

ւել նորա բարեկամ և ճշմարիտ ազա-
տութեանը ջանկացող է , և խորին շք-
նորհակալեաց ալ արժանի է . որուն
եթէ հնազանդիւնք , ոչ թէ միայն բան
մը կորուսած չեմք ըլլար , այլ ընդհա-
կառակը ալ աւելի շահած կրկամք .
մանաւանդ երբ սխալած ըլլաքնիս
ճանչնամք . քանզի « Առաքինութիւն
չքնաղ է խոստովանիլ զսխալանս » :

Ե Ր Ա Ձ

Քանի որ իմացական կարողութեան
այլ և այլ հանգամանաց վերայ կը խոր-
հիւնք , երազն՝ ալ աւելի կը սարգուի
մեր մտաց առջև : Երազն ուրիշ բան
չէ բայց եթէ մեր մտաց գործունէու-
թեան յայտարարը , և մեր խորհրդոց
չղթայն , որ գուգորդութեանց օրէնք-
ներով զանազան նիւթերու վերայ կը
տարածի :

Մեր միաքը ինչպէս արթնութեան
ատեն , նոյնպէս և քնոց ժամանակ շա-
բունակ կը գործէ , որ ապացոյց է մեր
հոգւոյ անմահութեան . մտաց այս
գործունէութիւնը մտքին զարգացման
և կրթութեան համեմատ կրնայ կանո-
նուոր և անկանոն լինիլ : Ուստի բարե-
կիրթ , կանոնաւոր , դատտիարակեալ ,
բարեխառն , ժուժկալ եւ ողջախոհ
մարդիկ՝ անկանոն , խառնաշփոթ եւ
անհանգստութիւն առթող երազներ
տեսնելէ ազատ են : Ինչպէս որ մեր
խորհուրդը արթուն եղած ատեննիս
ալ շատ անգամ անկասարակից բանե-
րու վերայ կը յաճի նոյնպէս և գիշե-
րըն ալ , ուստի զարմանք չէ երբ գի-
շերն ալ այնպիսի երազներ գան , որք

և ոչ խի մեր կենաց մէջ վայրկեան մի
մութերնէս անցած լինին , սակայն եթէ
յիշողութիւննիս սուր լինի եւ կարո-
ղանամք խոր հետազոտութիւն մի ը-
նել , դարձեալ մէկ դէպքի մը հետ
ուղղակի կամ անուղղակի մասնաւոր
կապակցութիւն ունենալը կը տես-
նեմք . բայց այս կապակցութիւնը ոչ
երազին բնութիւնն է եւ ոչ անհրա-
ժէշտ հարկ , այլ որովհետեւ յաճա-
խակի այսպէս սրտահաճ է , ուստի
հաւանականաբար կը հետեւցնեմք թէ
կամ ցերեկուան խորհածնիս և կամ
մեր կենաց մէջ անցած բաներն են որ
գիշերն ալ մեր միտքը կը գան . բայց
քանզի գիտեմք՝ որ մեր միտքը կարող
է գաղափարաց բազադրութեամբ
այնպիսի խորհուրդներ ստեղծել , այն-
պիսի տեսիլներ հնարել , որք առաջինը
եղած լինին , ուստի կրնայ նոյն միտքը
երազի մէջ ալ այս կարողութիւնը գոր-
ծադրելով զանազան խորհրդոց կա-
պակցութեանէն բարդովին նոր բան մի
երեւակայել :

Օր մի Արշալուսոյ մօտ երազ մի
տեսայ : Խիստ խառնամբոխ վրդովեալ
բազմութիւն մի կար հեռին , որ խառ-
նակ աղաղակներով կը յուզէր ու կը
ծիտար . բազմութիւնը երկարուակ կե-
րուէր բայց իրենց վէճին առիթը գը-
րեթէ անիմոնալի եղած էր . բազմու-
թեան մէջ մտերիմ բարեկամներ ալ
տեսայ , սակայն ես այս բազմութեանէն
խիստ հեռի կը գտնուէի , անձամբ
այն տեղ ներկայ գտնուիլ չէր կարե-
լի , միայն օդոյն միջնորդութեամբ եւ
չրգիտեմ ուրիշ ինչ կերպով իրարու
ձայն որոշ կը լսէինք :

Տեսայ որ այն բարեկամներէս խիստ
մտերմին վերայ է այդ յուզումը , սըր-
տիս անզուսպ յարձակումով ոստեայ
ի վեր , բարձր քարի մի վերայ կանգ-
նեցայ , և հասկացածիս ջալի , որչափ որ

այն խառնիխուռն ձայներէն կրնայ հաս-
կցուիլ, իբր թէ խնդիրն ստորուած հա-
մարելով իմ այն բարեկամս պաշտպա-
նել սխալ առանց աջ և ահեակ նկա-
տելու . իմ շուրջս եղող բազմութիւնը
իմ խօսքս կտրեցին և դեռ օղին մէջ
չք գրուած այլ և այլ ազգազաններով
խանդարեցին : Այս բանը ծանր եկաւ
ինձ , սիրաս խիստ վշտացաւ , ինձ այն-
պէս եկաւ որ խօսելու ազատութիւնս կը
բռնաբարուի . ուստի ուրիշ հատու-
ցում չըկրնալով ընել 'ի խոր խոցուած
և կարելիէր 'ի սիրտ վշտացած՝ բեմէն
իջայ և առանձին սխալ ինձ եղած սցս
անարգութեան վերայ մտածել , և որ
չափ անձնասիրութեամբ միակողմանի ,
այսինքն լոկ ինձ եղած զրկանաց վերայ
կը մտածէի , խնդիրն այնքան կը ծան-
րանայր և անձիս անսլտառութիւնը
կը մեծնար , որով միշտ անմխիթար և
անհամոզելի կը մնայի . շատ բարեկամ
ներ յորդորեցին զիս եւ մխիթարեցին
բայց ծնգուտ . չէի կարող և ոչ մէկուն
անսալ . քանզի անոնց բոլոր ճշմարիտ ,
արդար և իրաւացի փաստերն իմ ինք-
նասիրութեանս հնարած փաստերուն
առջեւ կը ոչնչանային : Ժամանակը
մութ գիշեր էր , իմ մտքս ալ կար-
ծես ուրիշ բան չէր տեսներ բայց մի-
այն ինք զինքս , ստիպյն եւ խօսելու
պարտքն ու պաշտօնն ունէի , լռու-
թիւնս ալ տանջանք մի էր ինձ . պար-
տազանց կը գանուէի : Երթալով երկու
կողմէն ազմուկն ու շիտթութիւնը կը

շատնար . տեսարանն ահաւոր էր ,
շուրջս վտանգներ սրտած կը տեսնէի ,
որոց մէջ կրնային անկանիլ այնպիսի
անձինք որք ինձ համար նուիրական
ու սիրելի էին . յանկարծ ջղային ցրն-
ցումով մի տեղէս ցաթկեցի և բնու-
կան բուռն բերմամբ մի անձս ճողոպ-
րելու համար լռած սաստիկ ճիգէս
արթնցայ :

Այս երազն 'ի սիղբան խիստ ան-
հեթեթ երեւցաւ ինձ և աննշան , բայց
անոր այլ և այլ ստորագոյնից վերայ եր-
կար խորհելէն վերջը իմացայ , որ ազ-
գային ներկայ խնդրոց նկատմամբ ու-
նեցած մէկ խորհրդածութեանս այլա-
կերպեալ երեւոյթն էր այն , զոր այլ և
այլ նկատումներով չըպիտի կրնայի ար-
տայայտել . ասով համոզուեցայ որ շատ
անգամ երբ մտքէս չանցած երազ մի
տեսայ կրսեմք . պէտք է գիտնամք որ
այն եւս երբեմն մտքէ անցած և այլա-
կերպած է :

Այս ամէն բացատրութենէն կա-
րող էմք հասկանալ երազին բնութիւ-
նը . ուստի և անոր մեկնութիւնը պէտք
է մեր անցեալ գործոց եւ կազմակեր-
պեալ խորհրդոց մէջ բնառեմք . որով
աղասս կը լինիմք նախապաշարման մը
տիրուր հետեւանքներէն և չեմք ստի-
պուիր զմեզ այլ և այլ սնտոի կասկած-
ներով մաշել ու տառապեցնել . այս
պիտի սնտոի խորհուրդներով նախա-
պաշարեալ հոգին հանգիստ չէ կարող
լինիլ :

Ա Ռ Ո Ղ, Ջ Ա, Կ Ա Ն

Մարդկային կենաց երջանկութեան ամենակարեւոր պայմաններէն մին է ԱՌՈՂ, ՋՈՒԹ Ի Ի Ն Շ, որուն նկատմամբ դժբաղդաբար խիստ անտարբեր են մարդիկ քանի որ զայն կրօնայեւն, բազմաթիւ պատճառներով, անհոգութեամբ, անզգուշութեամբ, կամ մարաշտութեամբ, անհնազանդութեամբ և զանազան հաճոյից մէջ զեղծանելով կը կորուսանեն իրենց առողջութիւնը, և երբ ձեռքէ հանեն զայն՝ յայնժամ նորա յօրգը կը զգան, կորսուելուն վերայ կ'ափսոսան և շուարած ու շփոթած՝ կ'ըսկսին դարման որոնել, այլ ցաւալի ճշմարտութիւն մի է խտտովանիլը թէ այնուհետեւ նոցա բնուած ու ընդունած դարմանը գրեթէ շարունակ երկրորդական է. որով յիրաւի բազմիցս կըստանան առողջութիւն, բայց ոչ իրենց նախկին ունեցածը, եւ շատ անգամ իսկ վնասակար կը լինի այս երկրորդ առողջութիւնը: Քանզի անով նորէն կը սկսին իրենց կամահաճութիւնը գործածել, որով կանկանին առաւել եւս տկարութեան մէջ և առողջութիւնն յայնժամ կը լինի աւելի դժուարագիւտ: Վասն զի ոչ այնչափ ստանալը՝ որչափ զայն պահպանելն է քաջութիւն:

Մարդիկ Աստուծոյ իմաստութեան օրէնքէն խտտորած օրէն կորուսին իւրենց առողջութիւնը և խիստ հին աւտենէ սկսեալ մինչեւ մեր օրերը զայն կը բնուեն: Քրիստոնէութիւնը իւր մարդասէր օրէնքներովը պարգեւեց զայն վերափոխ, բայց մարդիկ անոր ալ լիովին չեն հնազանդիր:

Այս նիւթը բազմաց ուշադրութիւնը գրաւած լինելով հին աւտենէ 'ի վեր՝ շատերը մարդասիրական փութութով շատ բան գրեցին ու խօսեցան և տակաւին կը գրեն ու կը խօսին յօ-

գուտ այն թշուառ ու կարեկցութեան արժանի մարդկային խմբին, որք թէ իւրենց անձին և թէ իւրեանց ստորագոյ սերնդոց գերեզմանն իրենց ձեռքը կը փորեն, եւ խաղաղով ու խայտաղով, խնդարով ու յնձարով մահուան գիրիը կը վազեն:

Մեր կը հաւատամք որ այն գրք, ուածներն անօգուտ չեն եղած ամեն անոնց՝ որք հնազանդութեամբ լսած և սիրով կատարած են նոցա սուած խրատներն ու խորհուրդները. քանզի ճշմարիտ է սա առածը թէ «Օգտակար խրատուց լաւ ունեկորութիւն ընելու յօժարութիւնը աղէկ կեանք անցնելու սկզբնաւորութիւնն էր: Եւ արդարեւ այսպիսի դիպաց մէջ յօժարակամ ունեկորութեամբ եւ հնազանդութիւն միայն կարող է մարդ մեծամեծ օգուտներ քաղել. իսկ առանց անոր անհնար է ուրիշ միջոցաւ փափաքածը ձեռք ձգել, քանզի միայն լսելն ու դիտումը հերիք չէ այլ հնազանդութեամբ գործադրել պէտք է:

Շատ անգամ լսելով՝ եւ մեր իսկ աչաց առջեւ տեսնելով ազխութեան սղորմելի զահերը, ցաւելով նոցա վրտանգաւոր վիճակի վերայ և չը համարձակելով ու անհնար լինելով իւրօրքան չիւրին յունկանէ խօսիլ, 'ի կարեկցութեանէ շարժեալ կը համարձակիմ հրապարակաւ և ընդհանուր կերպիւ այն յօդուածս գրել. «Ականջ ունեցողը թող լսէր»:

Իմ ազնիւ եղբարքս եթէ սիրով ընդունին իմ խօսքերս և անոնց կամովին հնազանդելու յօժարին, այժմէն կը վստահացնեմ զիրենք որ մեծամեծ օգուտներ կարող են քաղել, և ես ալ նոցա սիրոյն և օգտին համար պիտի ջանամ դիւրեմաց գրելով մեծաց եւ փոքունց համար ալ հասկանալի և նը պատուաւոր ընել:

Իմ, խօսքերուս ասայուցութիւնք
 ընտրած եմ Աստուծոյ եւ իմաստնոց
 պատուէրները, խօսքերը, խրատներն
 ու օրէնքները, փորձառու մարդկան
 և բժշկաց վիպութիւնները և բնու-
 թեան օրէնքը, այս պատճառաւ ալ
 կարող է ամեն որ վստահութեան ար-
 ժանի համարելով ընդունիլ և օգուս-
 քաղել:

Ա.

Ի՞նչ է Առողջութիւնք:

— Ներհական նիւթոց կամ տարե-
 ըսոց բարեխառն զուգակշռութիւնք:

— Եւ ի՞նչ է հիւանդութիւնք:

— Հիւանդութիւնն է սոյն հաւա-
 սարակշռութեան խանգարումը, ներ-
 քին կենսական ուժեաց նուազումը
 կամ առաւելութիւնք, հիւթոց ոմանց
 գրգռիլը, սրահիլը և ոմանց ազակա-
 նիլը:

Աստուածային բարեխնամ Նա-
 խախնամութիւնք բնութեան մէջ դը-
 րած է ներհական նիւթոց բարեխա-
 նութիւնք և արարածոց ամեն մէկուն
 իրենց պիտոյից համեմատ բաժնած է,
 որով արարածք կապրին և իրենց տե-
 սակն յառաջացնելով կը յարատեւեն:

Մարդը՝ որ արարածոց գերազոյնն
 ու կատարեալն է և բովանդակութիւն
 տիեզերաց, ըստ իւրում պայմանի ու-
 նի՝ ի բնուստ իրարու ներհակ նիւթոց
 այս սքանչելի համաձայնութիւնք, հե-
 տեւաբար ունի նա և առողջութիւն,
 որ իւր միակ գանձն է, որուն տեղն
 ուրիշ ոչ ինչ չէ կարող լեցնել եթէ
 գժբազգաբար մի անգամ կորսուի:
 Առողջութիւնք շնորհուած է մարդուս
 իւր այս կեանքը քաղցր և բերկրալի
 ընելու և յաւիտենական կեանքը ժա-
 ւանդելու, ուրեմն մարդուս առող-

ջութիւնք թէ այս և թէ հանդերձեալ
 կենաց երանութիւնք վայելելու կարե-
 ւոր մէկ պորձիքն է. և այս կարեւո-
 լութիւնն լի ու լի ունի մարդը, ինչ-
 պէս իւր ամենակատար կազմութենէն
 յայտնի է: Արդ ինչո՞ւ ուրեմն մարդիկ
 մեծաւ մասամբ կորուսած են իրենց
 այս ամենամեծ գանձը, այս պատուա-
 կան առողջութիւնք որ իրենց կենաց
 պիտոյից ամենակարեւորն է և առանց
 անոր թշուառ կը լինին:

Մարդիկ մեծաւ մասամբ, և հա-
 մարեա թէ ամեն պարագայի մէջ իրենց
 յաճախ եւ լի ու լի վայելած բանին
 յարգը չը ճանաչելով՝ անհոգ կը մնան,
 ոյս անհոգութիւնք մինչեւ յիմարու-
 թեան կը տանի զիրենք. քանզի անտի
 հաճոյքէ մի գրգռուած՝ առերեւոյթ
 ու սուտ բարիք մի ձեռք ձգելու հա-
 մար արդէն ձեռքերնին եղած ճշմարիտ
 բարիքը կը կորուսանեն: Նա եւս օ-
 տարին սեփհականութեանց վերայ
 մարդկան տածած ցանկութեան կիբքը
 և անկարեւոր պիտոյից արտաքոյ կար-
 գի փափաքը կորուսանել կը տայ իրենց
 բուն սեպհականութիւնները, հարըս-
 տութիւնք առողջութիւնք, հոգեկան
 կարողութեանց մէկ մասը, յիշողու-
 թիւնք, ըմբռնումը երեւակայութիւ-
 նը և ուղիղ դատումը, վերջապէս շատ
 անգամ կեանքն իսկ կ'կորուսանէ, ուստի
 և ամեն բարիքէ կողպտուած կը մնայ
 մարդը, որում խիստ յարմար կը գայ
 այն առակը որ կ'ասէ. «Շուներ գետէն
 անցած ասեն իւր բերանն եղած հա-
 ջին շուքը կամ պատկերը ջուրին մէջ
 տեսնելով բերնինը թորուց, ջուրին մէջ
 երեւցածը առնելու համար, և ահա
 երկուսն ալ կորսնցուց»: Յիմարու-
 թիւն չէ արգեօք վայրկենական հեշ-
 տութեան համար մէկ տեւական ու
 կորի կարեւոր բարիքը կորսնցնել:

Մեր կիբքերն առանց կանոնաւո-

րելու այնչափ գրգռած , շոյած ու սը-
նուցած եմք որ բաղձաթիւ վնասակար
բաներ իբրեւ սխալոյք հնարած , զու-
սանայ տեղ անհամեստ հաճոյք ըս-
տեղծած և իբրեւ բերկրանք չար յո-
ժարութիւններ գտած՝ խնամով կը
պահպանեմք եւ կը գործածեմք , որք
աճելով ՚ի մեզ կը վանեն զերկիւզա-
ծութիւնն և բոլոր առարկութիւննե-
րը , կարտաքսեն սուրբ զգացումներն
ու բարի յոժարութիւնները և կը խան-
գարեն մեր առարկութիւնը . այսու ա-
մենայնիւ աակաւին չեմք ուզեր հրա-
ժարիլ այն սխերխմ թշնամիներէն որ
զմեզ կը կեղեքեն ու թէ մեր անձին և
թէ Աստուծոյ ատելի կրնեն . քանզի
« Մեզք գործողը իւր անձը կ'ատէ » .
Սողոմոնն , այն մեծ իմաստունն ու հան-
ձարեղ փիլիսոսայն « Թիւր խորհուրդ-
ները , կրտէ , մարդն Աստուծմէ կը
բաժնեն . . . ամբարիշտը և իւր ամ-
բարչութիւնը Աստուծոյ ատելի են » :
Եւ յիրաւի , ինչպէս կրնայ մարդ սիրած
լինել իւր անձը , երբ կիրքերը չը չա-
փաւորելով բուն իւր ձեռօքը կա-
մօքն ու յոժարութեամբը իւր ան-
ձին չարիք կը հասցնէ եւ իւր կենաց
բողջութիւնը կը դառնայնէ : Ի՞նչ
պէս կրնայ սիրած լինել զԱստուած ,
երբ չը սովորի ու պահեր նորա յաւի-
տենական օրէնքներն , որք իւր օգտին
համար շնորհուած են : Իսկ երբ մէկը
չը սիրեր ոչ զԱստուած և ոչ ալ իւր
անձը , նա զով պիտի կրնայ սիրել , ի-
մաստայն ըսածին պէս թէ « Այն որ
իւր անձին չար է , ալ սերիչ որսւ բարի
պիտի լինի . նա իւր բարեաց մէջ չը
պիտի զուարձանայ » :

Յաճախ կրկնուած՝ բաց անդեղն
մնացած է ոս դարերու փարձովն ու
աստուածային յայտնութեամբն ստու-
գուած ճշմարտութիւնը թէ — բնու-
թեան օրէնք կայ , թէ այս օրինաց

դէմ մեղանչողը անպատիժ չը մնար ,
և թէ ամեն մեղաց պատուհասն իւր
մէջն է — :

Աստուած ամենաբարին իւր ան-
հուն իմաստութեամբը տիեզերքն ըս-
տեղծելով բոլոր արարածոց հաստա-
տութիւնը , տեւողութիւնը , շարժումը
և տեսակի փոփոխութիւնն անյեղի օ-
րինաց վերայ խարսխեց . որ կըսուի
բնութեան օրէնք . այս բնութեան օ-
րէնքը անսղոքելի է , կոյր է նա՛ և խուլ .
իւր տրամադրութեան դէմ մեղանչա-
ղին հեա խիստ արդարութեամբ կը
վարուի և ներել չ'գիտէր : Բնութեան
օրինաց մէջ ամեն մեղք կամ յանցանք
իւր պատիժն ունի , զոր մեքենաբար
կը դորձադրէ ամեն անոնց վերայ , որք
նորա օրինաց դէմ մեղանչելու հաճոյ-
քը կզգան . և պատժոյ այս գործադր-
ութիւնը թէ արդարութիւն է և թէ
գթութիւն . արդարութիւն է , որով
ուղղութիւն կը պահուի . գթութիւն
է որով կը կամի որ մարդիկ բարի լինին
և ստոյգ երջանկութիւն վայելեն : Տես
ինչպէս կը բացատրէ իմաստունը .
« Ո՛վ Տէր որքան բարի և անոյշ է քու
հոգիդ ամենուն վերայ , որ յանցա-
ւորները քիչ քիչ կը յանդիմանես եւ
ինչ բանով որ կը մեղանչեն , անոնցմով
աղղարարութիւն ընելով կը խրատես
որպէս զի չարիքէ ազատելով հաւա-
տան քեզ տէր . քանզի ինչ բանով որ
մեղանչէ մէկը , անով ալ պիտի տանջու-
ւի » : Այս խօսքերուն ճշմարտութեան
այն ատեն հասու կը լինիմք , երբ քըն-
նող ուշադրութիւն մի դարձնեմք բո-
լոր մոլորներու վրայ , որք իրենց ան-
սանձ կիրքերն իբրեւ սիրելի առարկա-
ներ կը գգուեն և իբրեւ մէն մի կուռ-
քեր կը պաշտեն զանոնք , այն ատեն
պիտի տեսնեմք որ նոյն սիրած առար-
կաներովն իսկ կը տանջուին հանապաղ .
և այս տանջանքը հեշտալի կը թուի ի

րենց, քանզի կաթողինս կը սիրեն իր
րենց անյշի կենաց անգութ գահի-
ճը և չեն ուզեր բաժնուիլ անկէ :

Ազահը ինչք գիղելու ջանկու-
թեամբ կը կորուսանէ հաւատարմու-
թիւնը . ճշմարտութեամբ թիւնը և ար-
գարութիւնը (քանզի մէկ մղութեան
հետ արդէն լծորդուած կը լինին ու-
րիշ շատ մի մղութիւնք) , և այս ա-
մենուն տեղ սոցա ներհաները գալով
կը վանեն նորա մէջէն որտի և մտայ
խաղաղութիւնը , խղճի հանգարու-
թիւնը եւ հանգիստ քունը . ողոր-
մելին ոչ միայն չարաչար կը տանջուի
իւր փափորը լեցնելու , որ լենայլք
չունի , այլ նաև առաւել եւս կը տան-
ջուի կը մտածէ և անհանգիստ կը լի-
նի գիշեր և ցերեկ իւր դիզած ճոխու-
թիւնն անկորուստ պահելու համար ,
զոր և չէ կարող վայելել : Իսկ եթէ դի-
պուստաւ կամ անդուշու թեամբ իւր
անօգուտ շեղձակոյտէն բան մի կարս-
ւի , ալ աննկարող լինի է յայնժամ իւր
վիշտն ու տրտմութիւնը , հոգն ու յա-
ւը , որք երբեմն այնքան կը զորանան
որ յիմար , ջնորած և կատաղի կ'ընեն
Ս. յսպէս են ահա ամեն մղութիւնք
զորս կը պաշտեն մարդիկ և կը հեշտա-
նան ի նոսին ի շարաչար տանջանս ան-
ճին և ի յու : Ի՞ չպէս որ կ'ասէ Սե-
նեկայ . « Գործուած չարիքներուն ա-
մենամեծ պատժը նոյն իսկ չարագոր-
ծութիւնն է . և խղճմտանքէն տան-
ջուող ամենէն ծանր պատուհասը կը
բաշէ » :

Յիմարութեան պտուղ են մո-
լութիւնք , որ բիշէն սխտելով կաճին
ու կը բաղմանան յաճախ կրկնու-
թեամբ և ունակութեամբ . որք չեն
կարող ուրիշ բան մի տալ , բաց ի մե-
ծամեծ վնասներէ : Ուրեմն կրից անկար-
գութիւնն է մարդուս առողջութեան
թշնամին , զոր հաստատելու համար

կարճեմ երկար փաստերու եւ պատ-
ճառաբանութեանց կարօտ չեմք . բան-
զի ով որ մարդուս բնական կազմու-
թեան որպիսութեանը հասու է , նա
գիտէ անշուշտ թէ իւր գործու-
թաններն ի՞նչ բանով կրնան շիտթիլ և
իւր ներքին հիւթոց հաւատարակը
ու թիւնը գլխաւորապէս ինչով կրնայ
կորսուիլ :

Ան արդարեւ հիւանդութեանց
արտաքին շատ պատճառներ որք կա-
րող են մեծամեծ վնասներ տալ . ինչ-
պէս յուրող , տարր , ապակահաճ օ-
դը , կերակրոց անյարմարութիւնը եւ
ուրիշ շատ անդուշու թիւններ . բայց
երբ կիրքերը կանոնաւորուած ու չա-
փաւորուած են , երբ մարդ բարեխառն
ու ժուժկալ կեանք վարելու սովորած
է ի մանկութենէ , այն արտաքին պատ-
ճառները շատ անգամ մեծ ներգոր-
ծութիւն մի չեն կարող ընել , և կամ
պարզ աւ դիւրին դարմաններով նոցա
պատճառած վիշտերը փութով կան-
հետանան , իսկ բարոյական պատճառ-
ներու , կրից եւ մղութեանց աղքե-
ցութիւնը խիստ դժնգակ է : Արից
պտուղն է զոյ ախտերը դժուարարոյժ
են և երբեմն իսկ անդարմանելի . և
այս առհասարակ ամեն կիրքերու և
մղութեանց բնութիւնն է :

Շուայտութիւնը , արբեցութիւնը ,
գեղիսութիւնը , փափկութիւնը , մանա-
ւանդ հեշտախառնութիւնը և այլն մա-
հաբեր ժանտախտներ են , այլ և այն
պիսի կուռքեր են որ իրենց անձնա-
տուր եզոյ և դիրենք պաշտող ողորմ-
լի յիմարները բերկրութեան և երջան-
կութեան խոստումով կը խաբեն եւ
ծաղկասփիւռ զուարճայլի ճանապարհ-
ներ յոյց տալով մացառներու և առա-
պարներու մէջ կը ձգեն . և ամեն կող-
մերնին չարաչար կը վիրաւորեն , որոց
սպին անջնջելի կը մնայ մինչև յմահ :

Մարդու և կենաց միտքով թշնամի,
 նորա կազմութեան գեղեցիկ չէ կրք խանդ
 քարոզ, նորա կենաց քաղցրութիւնը
 այնչափի դառնացող և բիշ բան չը
 կայ, բայց միայն իւր անասնո՞ւ թողած
 կիրքերը և զգայական բերկրութեանց
 անձնատուր լինելը :

Եթէ գիտնացին մարդիկ թէ վա-
 վաչ ցանկութիւնը ինչ կոտորածները
 բո՞ւ է եւ սակաւին ամեն օր կրնէ .
 սգիտի ստեղծան անկէ . եթէ տեսնելին
 այն խեղճ գահերը սրբ իբրև և սքսկէ գե-
 ներ կենդանոյն կը սաշարին ցանկու-
 թեան կրակին մէջ և հագւալ ու մարմ-
 նով չարաչար կը զոհուին զսղեր Ափե-
 բող խոհին, զգուանօր սխախ հեռանայ-
 ին անկէ . եթէ զգային, մանաւանդ
 մանկաւոր, սրտանիք և երիտասարդք
 թէ իրենց փսփուկ մարմնը վշտայր-
 նազ և իբր խորշակահար խաւրով և ի
 բենց սիրուն գեղեցիկութիւնն ու կայ
 տառութիւնը եղծանող և իրենց կը
 բայն ու զօրութիւնը ջրատող եւ բն
 դարձնան ինչն է այդ անգամ թ հեշտ սխ-
 տութիւնը, թունաւոր օձէ փախելու
 սէս սկիզբէն սարսափով պիտի հեռա-
 նային անկէ, որուն տգիտութեամբ
 իրենց անձը կ'ընծայեն նախ իբր սխ-
 բուն բարեկամի, յետոյ կը լինին յօժա-
 բակամ որչափ անկայ եւ անձնանուէր
 ծառայ, կարծելով որ և զան ատեննին
 կրնան քաշուիլ զերձանիլ . հուսի ապա-
 շղթայակապ գերի կը դառնան որ և
 ալ չեն կարող գիւրութեամբ ճողալ
 ինչ նորա անգութ ճիրաններէն . — Ո՞վ
 կրնայ ուրանայլ զայս . — Գիտեմ, ան
 փորձ պատանի, դու յանձնապատու
 նութեամբ կուրանաս . քանզի սակա-
 ւին նորա կեղերումը չես զգացած,
 բայց մինչեւ զգալը կորուսող մեծ
 պիտի լինի . իրողութիւնը և բազմաց
 վերայ տեսնուած ամեն օրեայ փորձերը
 և անխաղիչ նշանները կը հաստատեն

այս ամենան ճշմարտութիւնը, ուսով
 այդ օրինակը թող քեզ խրատ լինի և
 մի համարձակեր այսպիսի դասն փորձ
 մի քու վերադ ալ տեսնել . « Խելացի
 մարդը ուրիշին կրած վնասէն խրատ
 կ'առնու . խի անխելքը իւր շատ ան-
 գամ կրած վնասովն ալ չը խրատուիր .
 կ'ըսէ իմաստասէր մի . ուրեմն անխելք
 մի լինիր . կանուխէն, քու խիտ փոքր
 հասակէդ միշտ բարութեան ու սրբ-
 բութեան մէջ վարժեցնելու ջանայ .
 Անեկայ կ'ըսէ, « Խիտ օգտակար է
 մանկանց սր շատ կանուխ բարիին մէջ
 կրթութիւնն », նայն հեղինակը ուրիշ տեղ
 մ' ալ այսպէս կը խօսի . « Աւելի հա-
 մարձակ կ'ըսեմ ու կը վիայեմ, սր ա-
 ուսքնութիւն չունեցողը չէ կարող
 բերկրալի կենաց հասնելու յաջողու-
 թիւն գտնել » :

Այլ աւանջ ձեր հասակն այնպիսի
 հասակ մ' է, սր մարդ կը շուարի ձեզ
 հեա խօսած ատեն . Գուք չէք ուզեք
 համարուիլ, սր արդէն գերի եղած էք
 ձեր մէկ ժողութեան և գարշելի սովո-
 բութեան . դուք զձեզ ազատ կը կար-
 ձէք, եղբայրք իմ և որդեակք, և տա-
 կաւին իր համարձակիք զձեզ խրատու
 ղն անարգել, նորա դէմ զձեզ արդա-
 բայնելու համար փաստաբանութիւն
 ընել, և ձեր խրատիչն անհամեռա հա-
 մարել կամ սուտ հանելու աշխատիլ :
 Սակայն այդ եւս նայն աստի՛ն բնու-
 թիւնն է, այդ այնպիսի ճիւղ մի է, ու
 բով, ինեղճ գերի, արդարանալ ուզած
 ատենդ կը մատնուիս, որդմելի, ամեն
 որ կը ճանաչէ զքեզ և կը տեսնէ անկե-
 բեւ քու թշուառութիւնդ, բայց մի-
 այն դու ես որ զքեզ և քու աղետալի
 վիճակդ չես տեսնել, քանզի արդէն
 դու քու տերդ չես, յանձնած ես քու
 սիրտդ կամքդ ու միտքդ այն բանին
 զոր քու բերկրանքդ ու տեւական եր-
 ջանկութիւնդ կը համարիս և ահա այս

է. բու յնորեալ յիմարութեանդ առաջին կէտը. - Այն, ես յիմար չեմ, շատ բան գիտեմ, շատ բանի խելք կրհաս ջընեմ, ես խելացի եմ. - Իրաւունք ունիս գիտեմ շատ բան ուսած ես. բայց լռէ Յիսուս Քրիստոսին, « Ի՞նչ օգուտ է բողոք աշխարհը շահիլ և իւր անձը սուսել ». Մտիկ ըրէ Իմաստասիրին ալ. « Ի՞նչ պարծանք է, կ'ըսէ, բողոք արտաքին ու երկնային բաները գիտնալ և իւր անձը չը ճանչնալ, ի՞նչ պատիւ կրնայ համարուիլ գիտութիւն ներով ընդուիլ եւ առաքինութեամբ գատարկ մնալ, ի՞նչ է մղի գիտունը, եթէ ոչ գիրք շարկող էջ » : Հասցա Սե. նեկային ի՞նչ պիտի ըսես երբ համարձակ երեսդ զարնէ յիմարութիւնդ ըսելով, « Ես բնաւ իմաստուն չեմ ըսեր անոր, որուն բան մի կ'իջնէ. սւր մնաց որ հեշդատուութիւնն իջնէ » : Այս խոհական իմաստասէրը ուրիշ տեղ մի եւս սա իմաստալից խօսքը կ'ընէ. « Տախանքը խելքագարութիւն մ' է, կ'ըսէ, որ ծովէն լողալով կ'անցնի, որ մանկանց շատերը կը նեղքինայնէ, և որով կ'ինը մահն արհամարհելով իւր ամուսնայն սրայն դէմ դնելու կը յանգրգնի » : Այսպիսի կրիւք վարակուող մի կը նշանակէ որ մտօք ալ առողջ չէ. քանզի ընտրութիւնն ու գատումը խանգարուած է. « Առանց առողջութեան երջանիկ չէ մէկը, և առողջ չէ այն մարդը, որում կարի վնասակար բաները խիտ լու և օգտակար բաներու պէս զանկալի են » :

Արդ ինչ և իցէ կիրքով մանաւանդ վավաշտ ցանկութեամբ և անհամեստ խորհրդով վարակեալ անձը ճիշտ այս պէս է. Հիւանդ է բայց առողջ կրկարձէ. դէմքը խամրած, թոշնած ու գեղը ճած է, սակայն ինք զինք գեղադէմ կը անանէ և երբեմն այսերը բուքով կուռեցնէ, իւր ձեռօք կը շար և ինքզինք

գեր համարելով կը խորէ. և իւր ցանկալույն սիրելի լինել երեսակայելով կը բերկրի. և ահա այս բերկրութիւնն է իւր բովանդակ երջանկութիւնը և այս ծայրայեղ յիմարութիւնն է իւր իմաստութիւնը : Սասախի ցանկութիւն մղեալ է նա և աակաւին իւր անձն ու գիտող աչքերը կուղէ խաբել լծէ ինք բնու սիրց կամ հեշտախտութեան անձնատուր եղած չէ. դու որչափ ճըջ գրիտ նկարագրես և և աղպցուցանես իւր ախտին վատթարութիւնը և վնասակարութիւնը նա ինքզինք ազատ կը համարի անկէ և ինքն ալ քեզ հետ կը նախատէ զայն և կ'անարգէ. բայց ՚ի ծածուկ մղեպնութեամբ կը մղուի աւնոր և յամենայն սրտէ կը սրաշտէ զայն, որով որ յաւար կը հարի ու կը մաշի, զանաղան հիւանդութեանց կենթարկի. ստամբսի տխարութեանէն կամ ող նաշարի նեխութեանէն շունչը այնպէս կը գարշահատի, որ մարդ կը զղուի մօտը կենալու. ուղրմէլին տակաւին կէնաց քաղցրութիւնը չը վայելած՝ մահուան առկանին մէջ կը բռնուի և աւնոր դառնութիւնները աակաւ ստակաւ գդալ կը սկսի :

Յայնմի է ուրեմն որ մղինմանաւանդ հեշտասէր վավաշտութիւն որ և իցէ կերպիւ առողջ չէ. խիտ հիւանդ է նա մտօք հողւով և մարմնով, հետեւաբար աւերջանիկ, քանզի ինչպէս ըսինք իւր բովանդակ երանտ թիւնը կը կայանայ իւր մղութիւնն հաճելիներուն, և իւր մեղաակցայն սիրելի լինելուն մէջ զորս որ մի չարաչար պիտի ատէ : Այսպիսի մի անմիջական եւ խիտ դարմանեւրու կարօտ է. ոչ միայն նեխական, այլ աւելի բարոյական խնամոց և դարմաններու պէտք ունի. քանզի իւր բողոք հիւանդութեանց պատճառ բարոյական է. այլ աւանդ, որ շատ անգամ ուղրմէլի թշուաւը կը զլուի

բարացական խնամատարութենէ և մի
միայն նիւթական գեղերով կը դար-
ժանուի . և այն ուրիշ բանի համար չէ ,
եթէ ոչ ալ աւելի մնութեանց մէջ
ընկղմելով հեշտանալու համար , որով
հուսկ ու բնին այնպիսի ժամանակ՝ այն
պէս հիւանդութեան մի կենթարկի ,
որոյ առողջութիւնը գրեթէ անհնար
կը լինի : Այնուհետեւ կ'ըստին գանա-
զան ակտից , խթից և մարմանջմանց
մէջ տանջուիլ ու տաղնապիլ . բայց
դժբաղդարար չեն համարձակիր իրենց
ցաւոց պատճառն իւրեանց մնութիւ-
նը համարիլ , այլ ընդհակառակն թիւր
ու ցաւալի դատողութեամբ իրենք զի-
բենք այն վշտերը կրելու անարժան կը
համարին իրր թէ բնաւ իրենք պաւ-
ճառ չեն անոնց : Մերթ օրերն ու կը-
լիման առիթ կը գանեն մերթ սնուն-
դը , ու կերակուրը . երբեմն զբաղ-
մունքը կամ սուսմասիրական աշ-
խատանքը , (որ շատ անգամ պէտք
եղածին ջուրի սլ չեն աշխատիր) , և եր-
բեմն իրենց հաճոյքներէն զրկուիլը ,
և այլ ստանց նման շատ մի արտաքին ,
երկրորդական և խիստ հեռաւոր պաւ-
ճառներ կը հայթայթեն , որպէս զի ի-
րենց յանցաւոր լինելը չը խստապա-
նին . բնաւ չեն ուղեր մտանալ իրենց
ցաւոց և հիւանդութեանց իսկական
պատճառին , որպէս զի չըստիպուին
հրաժարիլ անկէ , մինչեւ անգամ զայն
իրենց ցոյց տուող եւ այն աղետալի
թշուառութեանց պատճառն ՚ի յայտ
ածող բարեկամի մը դէմ ատելութիւ
կը վարուին . իսկոյն կը խռովին , լսել
անգամ չեն ուղեր , կը ժխտեն ու կու-
րանան . և զըստարտութիւն համարե-
լով կը մեղադրեն խրատչոյ , թէ ին-
չո՞ւ արդեօք այնպիսի բերկրանքէ մի
զրկել կուզէ զիրենք . բերկրանք մի , յո-
րում որչափ յաճախեն , այնչափ կը
վատթարանան , կը Լքանին , կը թոււ-

նան , կը յուսահատին և այս յուսա-
հատութիւնը շատ անգամ կուտաղու-
թեան կը տանի զիրենք , որով կրակին
արհամարհել ամեն նուիրական զգա-
ցունն ու պարտաւորութիւնըր :

Կանկանին նոքա այնուհետեւ ըս-
տրիւթեան տակ և իրենց գերութեան
զլթայն ամենօրեայ կրկնութեամբ , ու-
նակութեան կուսնով կամապաշտու-
թեան սաղին վերայ դարբնելով կըստ-
ուարացնեն եւ անլուծանելի կ'ընեն :
« Անտանձ հեշտասիրութեան ոլէս ա-
ռողջութեան վնասող բան չը կայ . . .
և որ և իցէ հեշտութիւն մարդուս
մտքն ու մարմինը կը ակարացնէ » , ը-
սաւ Իմաստունն մի :

Բայց ինչ հարկ ասկէ անկէ փաստ
ու վիպութիւն մուրալու . դուք ձեր
վերայ նայեցէք , եղբայր իմ և որդեա-
կըք , զձեզ անուշառ քննեցէք . ձեր
ճշմարիտ բարիքն ու զոզ բարեկամնիդ
ճանչէք և անոր անասցէք , անկեղծ
եղիք , ուղիղը խստառիւնեցէք , բարի
խրատներն ու յանդիմանութիւններն
սիրով ընդունելով երկխոյզածութեամբ
հնազանդեցէք անոնց և արիւթութեամբ
կատարեցէք զանոնք . որոց արդիւնքը
պիտի համարէ զձեզ որ ձեր մեծամեծ
թշուառութեան առիթը ձեր մնու-
թիւններն ու ձեր կիրքերը փայտայտլ
անմիտ ու չար ընկերներն են , որոցմէ
փախչին սլ մեծ արիւթութիւն է :

Զձեզ քննեցէք կ'ըսեմ , քանզի ա-
հա տեսէք որ դուք դեռ մանուկ էք
և ինչու թոյններ էք . ինչո՞ւ խորշ-
մած է ձեր դէմքերը . ինչո՞ւ անժամա-
նակ ձեր նուրբ և փափուկ ձայները
այլանդակեր ու կոշտայեր են . ինչո՞ւ
յաճախակի հիւանդութեանց կենդար-
կիք , « Քանզի բարի վարուց հեանու-
թիւնն է առողջութիւնը » . ինչո՞ւ ա-
ռողջութիւն գանելու համար կարօտ
կը լինիք դառն և զղուելի դեղերու :

քանցի այդ անմեղութեան հասակէն սկսած էք մեղանչել, կ'երեւի թէ մեզաւոր ժողովրդեան համար Աստուծոյ սարսուռացած դառնութեան ջուր իղմելը ձեր վերայ ալ կրկատարուի: Զեր հասակը առողջութեան, զորաւոր անման և գեղեցիկութեան հասակ է, ինչչն ալ այդպէս եղծուած ու ակարացած էք. — մեղաց հետեւութիւնն է այդ. «Մեղաց վորձքը մահն է ու կ'ըսէ Առաքեալը, և հիւանդութիւնք մահուան առաջնորդներն են, որ առ սահառ սակաւ մաշելով կը հասնեն հանուր ոչ գեղ կայ և ոչ ալ անկէ դառնալ կարելի է»:

Յզբարք իմ՝ դուք սրտաննի էք, դուք երիտասարդ էք, քաղցր պէտք է լինի ձեր կեանքը, ինչն առաջամ դառնացուցած էք զայն. ինչն ալ կենդանութիւն ցայտոջ ձեր սիրուն աչքերը մարմնած եւ խոսքացած են. այդ ինչ արտաքոյ կարգի նիհարութիւն է. զոտամած ձերերու պէս ինչն կը գեղեցիք և ձեր անդամները կը դողան. ուր է ձեր բնական կորովը, (մի խաբուիք կատաղութիւնը կորով չէ). ո՛հ, ամսս, ինչն ալ այդպէս շուտով և անօգուտ կը կորուսանէք այդ անզուգական ստրգեւները որ ձեր շնորհքն ու փառքն են, որ ձեր կենաց պահպանութեան գործիքն ու պարծանքն են:

Անշուշտ դուք յանցաւորներ էք, ոչ այլ և այլ խօսքերով, ոչ սրտածառաբանութեամբ, ոչ փախչելով եւ ոչ թաքցելով կրնաք արգարանալ ու ազատիլ: Գուք յանցաւոր էք ձեր անձին գէմ, որոյ կարողութիւնները փոխանակ զարգացներու ու զորացներով ձեզ և ազգի մարդկան օգուտ գործելու, յանպէտս վտանած փրձացուցած եւ ձեր զգայարաններն անպիտանացուցած էք:

Գուք յանցաւոր էք Աստուծոյ Աստիանտմութե գէմ, որ ձեր ճշմարիտ երջանկութեան համար ամեն բան ստրգեւած է, բայց դուք զանոնք առանց օրէնքի, առանց մամանակի, առանց կարեւորութեան, անխախ եւ անօգուտ կը վտանէք, շարաշար գործածելով նորա անփոխարինելի պարգեւները. արհամարհելով սուրբի սակկառնութիւնը նորա կենտաւտ պատուէրները. և փոխանակ կեանք ստանալու համար նմա ծառայելու, ձեր մողսր համոյից համար կանարգէք ու կը թութափէք նորա քաղցր լուծը՝ որ զձեզ կուզի գէպ ՚ի ճշմարիտ ազատութիւն եւ յերջանկութիւն. ու կը ծառայէք մեղաց և մղութեանց որք կ'առաջնորդեն յեղծումն և յապականութիւն:

Գուք յանցաւոր էք նաև բնութեան օրինաց գէմ, որ չէ սահմանած ձեզ համար հիւանդութիւն, խեղութիւն, կուրութիւն, խլութիւն, գողոցութիւն և ոչ իսկ մահ, այլ այս ու մեկը նորա օրինաց զանցանութեան և ընդգէմ գործելուն հետեւութիւնն է:

Գուք յանցաւոր էք բովանդակ մարդկութեան գէմալ, որոյ մէն մի անգամները կը կաղմէք և որ ձեր գործունէութեան կարօտ է և ձեզմէ մեծամեծ օգնութիւններ կը սպասէ. իսկ դուք այժմէն ապիկար, ձեր անձին իսկ անօգուտ և բեռն էք աշխարհի և աաղտկութիւն պիտի լինիք մարդկութեան:

Աւելի ցաւալին բսեմ, դուք յանցաւոր էք և ևս ձեր սոցազոյ սերունդոյ, ձեր զաւկներուն գէմ, որոյ թշուառութիւնը այժմէն դուք ինքնին կը պատրաստէք, և որոյ գալիք ցաւոյ և աղէտից վերայ ձեր սիրան ալ պիտի մարմնի. թէ ձեր և թէ ձեր սերունդոյ, որդւոյ և թառանց կեանքը պիտի գառնանայ, և ընտանեկան կենաց

քաղցրիկ խաղաղութիւնը պիտի վեր-
 դառնա չարս ուր թողութիւն աստուա-
 ճային փառաց զրկումը և յաւիտեանա-
 կան դատապարտութիւնը, որ Աստու-
 ծոյ օրինաց չը հնազանդողներուն բա-
 ժինն է . ո՛հ, ի՛նչ ազգու է Առաքելոյն
 սա խօսքը թէ, « Յանկութիւնը կանց-
 նի բոց օրդը չը մեանիր և կրակը չը
 մարիր ո՛ր Արդարեւ մարմնոյ բողոր
 ցանկութիւններն ու բողձանքները օր
 մի կը գայ որ կ'անցնին, կիտրերը կը
 թուլանան ու կը զիջանին, հաճոյքնե-
 րը կը փոխուին ու կ'անարգուին, օր
 կը գայ, որ պիտի ըսէք թէ՛ « Ոչ են
 կամք իմ 'ի դոսա ո՛ր բայց օրինաց և
 բարոյականի խօսքերու ազգեցութիւ-
 նը, աստուածային յայտնութեան ճրչ-
 մարտութիւնները և ինքզմտանաց վը-
 կայութիւնը մէն մի անմահ սրգեր ան-
 դագար պիտի կեղեքեն և անսպառ
 պիտի կրճեն . աստուածանոց դեպման
 բոցը և անցեալ շարեաց անգուլ յի-
 շատակութեան անշէջ հուրը շարու-
 նակ պիտի տոչորէ թշուառ հողին .
 քանզի մարդուս կենաց օրերուն մէջ
 յիշողութեան մէջ մտած բան մի չի կայ
 որ մոքէն խորառ ելնէ . պիտի գայ օր
 մի որ խիստ յատակ ու պայծառ ամեն
 բան պիտի յիշէ . ուրեմն մարդ փոքր
 հատակէն մեծ քանքով վարժելու է
 իւր յիշողութիւնը սուրբ, ընտիր, բա-
 րի և աստուածային տեսիլներով, խոր
 խուրդներով և գործքերով լեցնել .
 քան թէ զաղկը ու աղակզի յիշատակ-
 ներով . սակայն մարդ ինչով կրնայ զայս
 ընել . եթէ ոչ գիշեր ու ցերեկ Աստու-
 ծոյ օրինաց վերայ խորհելով, զանոնք
 քննելով և նոցա հնազանդելով : Պէտք
 չէ բնաւ ներել որ մեր քով մեղան-
 չական խօսքեր լինին, և անսուրբ խոր-
 հրդոց պէտք չէ երբեք տեղի տալ որ
 մեր մտոց մէջ մուտ գանեն ու մեր
 խորհուրդները գրաւեն . քանզի եթէ

անգամ մի թոյլ ասմք մէկ մտնկան
 խորհրդոց որ սպրդի ներս մտնէ անկէ
 վերջ հազարաւորներն ներս կը թափին
 ու կ'աւաճնորդեն գործնական մոլու-
 թեանց և արգելք կը դառնան բա-
 րութեան օթեւան լինելու, վասն զի
 « Թիւր խորհուրդներն զմարդ Աս-
 տուծմէ կը զատեն . . . և չար անձին
 մէջ ու մեղքով վարուող մարմնոց մէջ
 իմաստութիւն չը մտնէր ու չը բնա-
 կիր ո՛ր . . . »

Հայոց մատաղատունի սերունդ,
 աղգին ասպագայ յոյսեր, ի՛նչ է սոց-
 ձեր արմատը կրճող և կենսական հիւ-
 թը ծծող օրդը, որ ձեր ազատ ու
 կանանաւոր աճումը և անարատ ու
 յուշիկ զարգացումը կ'արդիլէ և կը
 շփոթէ, որ ձեր սիրուն վայելքութիւնը
 կ'եղձանէ և ձեր սիրոց պատգները
 վաղաթառամ կը թոթափէ, որ ձեր
 պաշտօնը զորութիւնը կը սպառէ և
 զձեզ յամենայնի անպիտան կ'ընէ :

— Այդ ձեր ձեռքերն ու մերու-
 թիւններն են, սոց ձեր հեշտախ-
 տութիւնն ու վախճ ցանկութիւննե-
 րն են, որոց վերայ խորհիլն անգամ
 հալ ու մաշ կ'ընէ, կը չորցնէ ու կը
 մախք կը դարձնէ ձեր հրաշակերտ
 կազմութիւնը և հիւանդութեանց բը-
 նակորան կ'ընէ, ուր մնաց հասցա որ
 այդ կրից թեւաղութեանց գործով
 ալ հեանելք ինչ և իցէ միջոցներով
 զորս ձեր յիմարութիւնը, ցնորբը և
 չար ընկերներու խորհուրդները ձեզ
 կը թեւաղեն : Միտն որդեակք, կատ-
 ղած գաղանէ փախչելու պէս խոյս տը-
 լէք ատանցմէ, դոքա ձեր բարեկամնե-
 րը չեն, « Բարեկամ մի, կ'ըսէ իմաս-
 տասէրը, շատ աղէկ կուղէ մեր առա-
 քինութիւններուն օգնել բայց ոչ թէ
 մեր մոլութիւններուն, զմեզ ետ կը
 կեցնէ նաև այն ամեն բաներէն որ վա-
 յելու է եղածին հակառակն են, և թէ

որ չի կրնայ զմեզ համարել, կ'ըսէ, դու չես կարող զիս միանգամայն շարքսըթ ու բարեկամ ունենալ. պէտք է օգնել բարեկամին անոր գործքերուն մէջ, բայց չէ թէ անոր յանցանքներուն մէջ տը :

(Շարունակութիւն)

Դ Ա Ս Տ Ի Ա Ր Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Կ Ա Ն Ա Ն Յ

(Շարունակութիւն, տես թիւ 7.)

() րինակի համար, երբ մայր մը իւր զուակի բնական հաճոյքը ընցնելուն համար ծաղկոց կ'իջնէ՝ իւր գոտրիկի ձեռքէն բռնած վարդ մի կամ շուշան մը կը կրորէ իւր զաւակի վարդանման ճակտին զարդ մը աւելցնելու համար, անոր վարսերու, անոր խաբոբիկ մտղերու մէջ դնելու ատեն, ըսէ իւր սիրելի աղջկան տես իմ սիրուն զաւակս այս ծաղկը ինչ ազնիւ հոտ ունի ու դոյն, և ինչ զարմանալի է, թէ որ մենք ուղենք այսպէս մէկ հոտ շինել, նախ տարիներ պէտք է. երկրորդ թէ որ նմանցները հոտ կը պակսի, կամ անոր դոյն, թող անոր բնական կենդանութիւն, որ եթէ մէկը յանգզնի ընեմ ըսելով յիմար կը լինի. այս գեղեցիկ վարդը ո՞վ է շիներ, ուրեմն իմ ազնիւ աղջիկ ըսէ տեսնեմ, թէ որ չես գիտեր սորու անունը. քեզիս Վստեղ մօր սքանչելի աստուածախօսութեան սահման կրնդ արձակի, կրննայ ըսել երկիւղած խօսքերով, թէ այն Վստուած, որ զիս և դքեղ ստեղծեր է, զի մենք ասկէ քառասուն տարի առաջ չկայինք, ինչպէս որ այսօր կանք, ու դու սիրուն աղջիկս ասկէ վեց տարի առաջ ո՞չ կայիր և ոչ կը տեսնուէիր, այն երկիւթի Վստուած,

որ զիս դքեղ և այս բովանդակ աչքի և մտայ տակ իշնալու բաները ստեղծեր է, ու սիրելի մօր մը նման մեր վայ խնամք ունի, թէ որ անոր խնամք մէկ ժամ մէր վրայէն սրակոնի, խոկոյն կ'ոչնանամք, այսինքն կ'ըլլամք ինչ որ առաջ չէինք, դու որ ինձ համար կենդանի վարդ մնես կամ շուշան այն մեծ Վստուածոյ ձեռքէն ելած ես, կը տեսնես այս վարդը այս վարդի հոտ բոլոր մարդիկ ժողովին մէկ տեղ, երբ նա չիտայ անկարելի է որ տան, ասոր այս սիրուն դոյն, որ քու այտերէն ալ գեղեցիկ է, Վստուած է գրեթե անոր վրայ, գիտե՞ս աղջիկս անոր մեծութիւնն ու զօրութիւնն, այս երկինք ու երկիր որ կը տեսնես սքրան մեծ է, անոր ձեռքին մէջն է, անոր խնամքով կը շարժին ու կը կենան, մեր իսկ սիրտը ու հոգին անոր ձեռքն է, նա մեղանէ, հեղութիւն, խոտարհութիւն, սէր և սուրբ երկիւղ կը սփռուի անոր, ու ան ալ մեզ համար. զի մենք այս ծաղկի պէս չենք, որ զմեզ վրդուծածի պէս ոչնչուեամք, մեր մէջ բան մի կայ, որ Վստուածոյ մեղի տրուած է որն ոչնչանալ չունի, զի մեռնիր ու զի սրակոնի, այն բան մեր հոգին է, այն է որ զմեզ քարերէն, հողէն, ջուրէն, ծաղկէն, կովէն ու թռչուններէն կը տարբերէ, մենք որքան որ այս մարմնով, ուտելով ու խմելով կովին և ձիուն և ուրիշ կենդանեաց պէս ենք խօսքով ու մտքով անոնցմէ տարբեր, անոնք ուտելու քունանալ միտակ գիտեն, իսկ մենք ուտելու եղանակն անգամ կը մտածենք որն մեր հոգիին արդիւնքն է :

Երբ իմ սիրելի աղջիկ, քիչ մի ևս մեծանաս ու դուն ալ ինձի պէս զաւակ ունենաս, կը գիտնաս այն ատեն, թէ հոգին ինչ է մեր մէջ և թէ նա ինչու չոչնչանար ու չի մեռնիր, հիմա խօսքս Վստուածոյ վրայ է ու անոր ուղածնե՞ս :

րուհի անանց վրայ խօսիմ, Աստուած, ինչպէս որ դու զիս մայր կը ճանչնաս ու կը սիրես, այն պէս ալ բովանակ տիեզերս զանի իրենց ստեղծող կը ճանչանն ու կը սիրեն, իմ աղջիկ, դու զիս ինչպէս կը սիրես. բիղի ծնելուս ու սնուցանելուս համար, այնպէս և ես զ'Աստուած կը սիրեմ ինձի կեանք սը նուեղ և զբեղ ինձ տալուն համար, ու դու պէտք է որ զայն սիրես ու վախ նաս անկէ չարիք մը գործածող ատեն, սիրես զանի ու խնդրես անկէ ուժը, բարիք մը լրացող ատեն գոհանաս անկէ :

Աստուած, իմ սիրելի դստրիկ միշտ սրտիդ մէջ սրահէ, որ լաւ սարիս . սրտիդ մէջ կենալու մէկ հատիկ միջոց աս է, որ միշտ հեղ ու խոնարհ ըլլաս . դբեղ ու բիշ աղջիկներէն վեր չ'դնես, այլ թէ բարիք ընելու մէջ շատ պակաս մնացած անոնցմէ . թէ որ խոնարհ ըլլաս իմ սիրելի աղջիկ միշտ Աստուած մտացող կերևնայ ու քու հետ սիրելի շօր մը պէս կը տեսնուի, երբ միտքդ զանի տեսնէ անհնարին բերկրութիւն կուեննաս . կուզես որ ես մէկ օր մը քեզմէ հեռու կենամ, ոչ, ուստի պէտք է որ այնպէս և չուզես մէկ վայրկեան անգամ զանի քեզմէ հեռու կենայ . գիտես սիրելի աղջիկս, այն չար աղայքը ու վատ աղջիկները ինչու կատենք . սրովհետեւ անոնք աստուծոյ ուղամ չեն ընէր, ու Աստուած ալ անոնցմէ հեռացեր է, անոր համար անոնք իրենց վրայ սիրոյ բան չեն ձգած, ուստի չեն սիրուիր, թէ որ դու կուզես որ միշտ զքեզ սիրենք ես և հայրդ և եղբայրներդ պէտք է նախ և առաջ դու զ'Աստուած սիրես՝ որ քեզ կեանքը տուած է նա՝ որ կը խնամէ զքեզ, նա սրբաւոր մէջնէ ու հոգւոյդ հետ . նախ զանի սիրելու ես ու անոր առաջ երեսի վրայ ի յնալով օր բանի միանգամ բսելու

ես, իմ բարի ու երկնաւոր շայր որ երկնքի մէջն ես . քոյ սուրբ անուը ինչպէս որ սուրբ է թող ինձմով ալ սուրբ ըլլայ . քու մէկ հատիկ թագաւորութեան տակ թող որ սարկիմ ինչպէս որ քու հրաման տիեզերաց վրայ անգարծ է . թող իմ սրտիս ու կամացս վրայ ալ այնպէս ըլլայ, իմ մշտնջենաւոր սնունդս ինչպէս որ յանդոյէ կեանքս տուիր մեծ առատասրտութք սուր և մի խնայեր, մեր թեթեւ պարտադան ցուժիւնները կ'աղաչեմք բանի տեղ մի դներ ու կարեորութիւն մի տարայն մենք քեզմէ խրատուած ուլ երկնաւոր շայր կը թողնենք մեր դէմ պարտաւոր գտնուողներուն, ու դու որ գիտես մեր գիւրբաբեկ յոյսը ու հաւատքը, ուստի զմեզ աշխարհիս փորձութե մի մասներ, եթէ քու օրհնեալ կամօք կը մատնես, մեր յոյսը ու հաւատքը մեր մէջ ամբաստնէ, որ աս բինք չարի որոգայթներէն, քեզի փասք յաւիտեանս ամեն :

Իմ սիրելի դստրիկ, կը տեսնես այս սիրուն շուշան ասոր պատուական գոյնը ու անուշ հաւոր առանց մեր երկնաւոր շօր կամաց չի լինէր, նա է որ կը խնամէ, ոչ միայն ծաղիկներ, ծառեր ու բոյսեր, այլ ամեն արտրածները ամեն օր ամեն վայրկեան անոր խնամք կը վայելէն յետին բոյսէն ու ամեն մանր ձձիկէն, մինչև արև ու լուսին ու երկնից այն մեծամեծ լուսաւորներ միշտ անոր օրինաց տակ ու անոր սուրբ կամօք կը շորմին կապրին ու կը վերջանան, իմ սիրելի աղջիկս, գիտցիր որ անոր այն բան մեծութեան հետ մէկ սքանչելի յասկութիւն մի ունի, այն է, միշտ ապուղայն կը տեսնէ, ու գոհանիքները կը ըննէ, ու բան մի չը կ'այ, որ անոր աչքէն ծածուկ մնայ, դու՝ իմ աղջիկ ասկէ վերջ միշտ միտք պահէ ու վախցիր անկէ, որ ծածուկ ոչ գէշ բան մի

անգամ խորհիս կամ դործես : Թշուշուհներ , գաղաններ , անասուններ , թէ որ աւելանան բոյսեր ու տունիկեր կարելի է որ չեմ սխալիր , անոր անուն կ'որհնեն , անոր աղօթք կրնեն և իրենց սնունդ կը խնդրեն ու նոյնպէս իմ աղջիկս մեր պարտքն է անոր սուրբ աւանդը օրհնելը ու փառաւորելը , աղօթիւք որ մեր ձայնը լսէ , լսելով ըզմեզ պահէ պահպանէ :

Միրելի աղջիկս խօսքս այսքանով չի ըմբար այ թէ ճաղիկներուն նկատմամբ այսքան ըսի , իսկ երբ դու ուզես որ աւելի մերեքնաւոր Հօրսիր յն վրայ բեղ խօսիմ , պիտի ղմայրես ու սիրարդ հոգիդ քննէ պիտի բռնի թռչի անոր սուրբ աթոռին առաջ ու պիտի փարի անոր պսաւանդանին , ու խտէ մեծ սիրով միշտ սիրել այնպիսի Հայր մը , այնպէս բարի Արարիչ մը ու անոր մէկ հատիկ որդին Յիսուս Վրիստոս որ մեր սիրոյ համար զմեզ փրկելու սիրով մահուան բաժակը առած է , ու մեր կեանքը իւր մահով զնած է : Միրելի աղջիկս գիտեմ որ լսել կուզես ու ես ալ պարտք ունիմ քեզ ըսելու , ուրեմն այս աղջիկ բարունակի տակը նստիմք քեզ մի ըստ միով պատմեմ թէ մենք ինչ ենք :

Մենք բոյսերէն ու կենդանիներէն դերազանց արարած մի ենք , մեր մէջ բանական հոգի կայ , ինչպէս որ պահ մը առաջ ըսի քեզ , այս բանական հոգին անմեռ է , ինչպէս որ Աստուած սկիզբն ու վերջ չունի , նոյնպէս մեր հոգին իւր սկիզբ կաւնէ Աստուծոյ ու վերջ կունենայ առ Աստուած ըսել կուզեմ վերջանալիք չունի , կենդանին այն է կով ու ձիւն , գառնուկն և այլն , որոնք որ կաճին կը շարժին ու կապրին այն բան է անոնց կեանքը . իսկ մեր այնպէս չէ , մենք այս կեանքի մէջ ուրիշ ան վերջ օրմը ալ կունենանք , և այն ան-

վերջ օրը ձեռք բերել մեր կամեցողութեան ասկի է , մեր ազատ կամօք կը զատենք : Այրիւս կերպ է այն ան վերջ օրը մեզի համար , երբ մէկ աղջիկ կամ տղայ իւր ճնարաց բարի խրատներուն կը լսէ , ինքը բարի ըլլալու կը ցանկաց , և միշտ բարի բարի գործքով կը բալէ , այն է՝ երբէք ուրիշն փնաս չի տար , սուտ չի խօսիր , երդում չիներ , չի հայհոյեր և այլն այն է որ անվերջ ուրախութեան մէջ կը մտնէ օր մը , իսկ այն որ բարի խրատը կը մերժէ , չարը կը սիրէ , ընկերութեանց զրուանք կըլլայ . ու իւր բարի Արարչի ներկայութիւնը ոչ ինչ կը համարէ , օր մը անվերջ թշուառութեան մէջ կը մտնէ , ուրիշ կարելի չէ ազատիլ : Այս մեծ և նշանաւոր խօսքերս կարելի չէ որ ՚ի միտ առնես , միշտ չե որ քեզի մեր սկիզբը չը բացատրեմ ու մեր թշուառութեան վարագորք աչքիդ առաջ չը բանամ :

Միրելի աղջիկս , այս բովանդակ բաները , որոնք որ աչքիդ առարկայ կը լինին , ու միայնք կրնայ բռնել , այն ամեն մեր երկնաւոր Հայրը իւր միտ ծին որդւոյն և Սուրբ Հոգւոյն հետ վեց աւուր մէջ շեղածէն հրամայեաց ու եղեր են , ասոնք ամենը Աստուծոյ մէկ « եղիցի » յըլլայ ըսելով եղեր է , այս լոյսը որ ամեն բան մեր աչքին կը լուսաւորէ դոյն կուտայ և ձեռ , տեսակը կըղատենք անով առանց դիւռուարութեան , անոր առաջին հրամանով եղած է , արեն ու լուսին և տատեղները որոնք դիւերուան երկնից զարդն են , չորրորդ օր արևու հաւաքումէն հրամայեց ու հաստատուեցան , բոյսեր , ճառեր , անասուններ , գաղաններ , թռչուններ , ձուկներ և ամեն բան լոկ ասաց ու եղան , հրամայեց ու հաստատուեցան . բայ ՚ի մարդէն , վեց աւուր մէջ ամբողջ եղած են և անոնց

կարդաւ որի ալ ածու մը ու շրջան իւր
 անհուն հանձարի օրինաց տակը կը
 դառնան դո՛հ կերպով . զի ինչպէս որ
 առաջին օր և առաջին ժամ էր տրե-
 նոյն է և այսօր և միշտ , անոր պէս
 ալ կենդանիք , բայտեր իրենց յաջորդու-
 կան շրջանի մէջ . դու սիրելի աղջիկս
 երբ տան մը տաճարի մը գեղեցիկ և
 հսկայ շէնքը ու ձևը կը տեսնես անոր
 ճարտարապետին վրայ դարձանք շա՛-
 ւելնոր , ու ճե՛ս սրանչանոր , հասցա-
 ճես դեպքեր . երբ այս տիեզերք ու իր
 մէջի բովանդակի գործքերը որոնք Աս-
 տուծոյ հրամանով եղած են , աւելի
 սքանչելին այն է , որ միշտ և շարունակ
 անոր սուրբ օրինաց տակ կընտրուին
 ու կը հիննան առանց իրենց տեսակ
 և ձև կորսնցնելու . շուշան ու վարդ-
 տեսար , այս տարի ինչպէս որ ծաղկեցան
 գմեղ զուարճացուցին ու թառամելով
 սիրտերնիս կատրեցին , յաջորդ տարին
 ալ նոյնպէս պիտի ծաղկին , կամ այն
 տրամաէն , կամ անոր ունգէն , կը
 տեսնես աղջիկս , անոր մեծ հանձարը՝ դր
 շարիւր անկորելի է . զի սերմը տակդ-
 ծառած է ծաղկի մէջ , ծաղկիկը ըրած է
 սենդը սերմը իր մէջ նոյնպէս և կենդա-
 նիք , զի երբ գառնուկը իւր մօրէն կը
 ծնի , իւր մօր սրտին է , ու իւր գառ-
 նուկին մայր , որ ժամանակը իւր վարա-
 քուրին տակը միշտ ծածկած կը պահէ ,
 ու նոյնպէս և դու իմ աղջիկս երկու-
 նչանսկու թիւն ունիս . իմ դուտնես
 ու իմ թոռան մայր , ես ալ քեզի պէս
 էի իմ մօր քու մամուղ , անսնց վրայ
 ուշդ բաց , սիրտդ պատրաստէ այն
 բարի Աստուածը սիրելու ու անոր
 գործոց խեղամտելու , ու անոր կամաց
 հետեւելու , որուն վաղձան անոխը
 օրերուդ երջանկու թիւն է :

Այս վեց աւուր Արարչութիւն
 կրան , որուն մէջ երկինք ու երկիրու ա-
 նոր մէջի բոլոր գարգերով եղեր են Աս-

տուծոյ հրամանին համեմատ . այս վեց
 աւուր մէջ մենք ալ սկիզբը ունինք ու մէր
 սկիզբը վեցերորդ աւուր ամեն բանէն
 վերջն է . թէ որ Աստուած աշունչ գիրքը
 կարդալու կարողանաս , ու ստիակի պէս
 կարդաս կ'տեսնես հոն , ու ետ ալ միտքդ
 տանելու չափ պիտի խօսեմ քեզ . ու
 դու մտքդ չ'հանելու չափ պիտի
 զգուշանաս . զի իրրե համար պիտի
 պահանջեմ քենէ : թէ որ լաւ պատաս-
 խանես անուշիկ շրթանքներդ պիտի
 համբուրեմ ու դքեզ սրտիս վրայ պիտի
 սեղմեմ ու վարտերդ պիտի գգուեմ . զի
 դու սրտիս ու զածին պէս դուակ կը
 լինիս , Աստուծոյ սիրելի , ու մարդ-
 կային ընկերութեան անդամ , մեր երկ-
 նաւոր Հայրը ինչ որ ուղեց որ բլան ,
 իմ սիրելի աղջիկս , մեկ խօսքով ու
 “ եղիցի ” բառով կը վերջանար , ու
 կըլար , ինչպէս որ հայրդ երբեմն
 քեզի ակնարկելով մը կիմտցնէ , թէ
 ջուր կուզէ , ու դու շուտով անոր
 հրամանը կը կատարես անոր ջուր տա-
 լով , այսպէս ալ երկնաւոր Հօր ակնարկ
 այս ամեն գեղեցիկ արարածները ա-
 ռաջ բերած է : բան կուգայ մեր խան-
 ճարուրին , ու վերջին արարածին մայր
 դուն . հոս կանկ կառնեմ ու գոհու-
 թիւնս Տէրոջ կը նուիրեմ որ ամեն գե-
 ղեցիկ արարածները ստիկ բանիս ա-
 ռաջ բերած է , իսկ գմեղ ո՛չ այնպէս ,
 այլ խորհրդով ու գործով . ո՞վ Աստուած
 ամենակարող , ի՞նչ է բանաւոր սրբը որ
 այսքան կարեւորութիւն կուտաս , մի
 թէ քո անթիւ փառարանչաց մէջ
 մարդկանց պէս ազնիւ ու պատուական
 չ'կայ , որ մարդն այսպէս կը վստմացնես .
 անս սիրելի օրիորդս անոր մեծ սերը
 անորը մեծ ինամբը . ու ստի միշտ դո՛հ
 եղիր որ ամենադարի եւ ինամոզ
 Հայր մի ունիս երկինք ու սրտիդ
 մէջ եւ ամեն տեղ , ուրեմն ժամ
 է սիրելիս մեր խանձարուրին մօտիկ .

նանք ու պատկառանքը բանանք եւ հիանանք իսկ անոր վրայ . տես մեր երկնաւոր Հայրը ինչ կընէ, կըհրաւիրէ Կիւսիք արտօցուի մարդ ըստ պատկերի մերում եւ ըստ նմանութեան . որոյ հրաւեր կը կարգայ այս ամենի մաստ, ամենակատարեալ Հայր, իւր ծոցսմին բանին, իր միակ որդւոյն, որուն սէր ու գութը ապա պիտի խօսիմք եւ իմ սիրելի աղջիկս, ալ որոյ կը կանչէ իւր մշանջնակից սուրբ Հուոյն, ասոնց միասնական Մտուածութիւն անուն կուտան մեր եկեղեցւոյ սուրբ Հայր, ու ասանք Հայր և Արգի և սուրբ Հօգի մի են, ասոնց վրայ մարդու խօսքը կը պակսի ու իմաստ ոչինչ կը լինի . դու այս երեք պաշտօնու միմակ պարօք և հարկ ունիս, ճառելու ոչ երբեք, զի այն մատուցի յիմար է երբ կը ջանայ արեւու մակերեւոյթի ջերմութիւն ու շառաւիղները պարզ աչք քննել . խեղճ աչքէ կենիէ ու ոչինչ կը շահի, զի անարխանձող շառաւիղներ ու ճառագայթներ աչքին փնաս կը պառճառեն . ալեկ է արեւու ջերմութեան տակ աճիլ ու անոր ըստ ու արդատաւորութիւնը վայելել . իսկ անոր նաեւ, այն է զոյն քննել միշտ յիմարի դորձ է :

Արեւի աղջիկս կարգ մեր նախահօր լինելոյն հասաւ . ու շոք բաց տես թէ մեր բարի Մտուած ինչ կընէ, նախ մէկ ամեն ճառերով զարգարուն պարտեղ մը կը անկէ արեւելքի մէջ, ու հող կառնէ երկրէն և կը շինէ այն հողազանկուած մարդ, մարդը կը լինի կենդանի, ու կը վիշէ անոր երես իր անսպառ և սուրբ շունչը, կըլինի մարդը հողի կենդանի, այն է բանաւոր, իրեն պէս իր պատկերի նման կընէ Վրասը, մեր նախահօր անունը Վրամ աղջիկս, աղէկ միտք պահէ . ո՛հ ինչ լինելի է մեր սկիզբը, Մտուած հող լինելու ու այն հող կենդանի կը շինէ,

ու իւր շունչ կը վիշէ անոր մէջ, մարդ կը լինի բանաւոր ու Մտուածոյ պատկեր, Մտուածոյն մարդը միմակ այն պարտիզի մէջ կը դնէ, սրուն անուն Վրամ կամ դրախտ էր . այս աստուծոյ պատկեր իմաստութիւն լեցուած բանաւոր մեր նախահօրը Վրամ գիտէր որ իրեն օգնական մը պատկերակից մը կը պակսի, ու Մտուած արդէն կուզէր անոր օգնական մը ապա անոր վրայ թմբութիւն մը դրաւ, այսինքն քնացաւ Վրամ, մեր բարի արարիչ անոր կողէն հատ մի հանեց ու անոր պէս չքնաղ կոչս մի ստեղծեց . ու կենդանութիւն տուաւ, երբ մեր նախահօրը արթնացաւ իրենքով իրեն պէս մը գաաւ բսելով, ահա հիմայ իմ ոսկորէն իւր ոսկորը ու իմ մարմինէն իւր մարմինը, ասիկայ թող կնիկ կանչուի ի զի որովհետեւ մարդէն ելաւ . ու այս չքնաղ աղջկան անուն Վրա գրուեցաւ, որ կեանք կը թարգմանուի, այս առաջին մարդ և առաջին կին մեր արմատներն են, ու ասուցմէ է որ մենք առաջ եկած ենք . մեր խանձարուրը այն Արգեմն է, այն գրախտ, որուն մէջ կեանքը անեցանք և թշուառութիւն ճառակեցինք : Արտով մինչև հոս լսեցիր սէրելի աղջիկս, անշուշտ և զորմացար թէ Մտուածոյ մեծ սիրոյն վրայ, թէ մեր սկիզբն վրայ, և թէ այն անմեղ երկնասարդին Մտուածոյ ձեռքէն եւ ըստ մարդուն և սիրոյն կուսին սքանչելի Վրային վրայ . երեւակայէ, երբ մէկ չգտնուած պարտիզի մը մէջ չքնաղ ու լուսազգեստ անմեղութեամբ կոչս մը ունոյնպէս և երկտասարդ մը ձեռքէն, այն աննման սքարտեղը իրենց թեթեւութիւն ոտից տակը զուարճանայ և երկնից տէրը իւր սուրբ և սքանչելի փառքով դիմէ հոն իւր սիրելեացքով ալ անկէ աղէկ բան կայ, հարկաւ ոչ պիտի բռնուի :

Ա . Գ . Վ .

(Շարունակելի :)

ՀՐԱՇԱՒԻ ՀՍՍՏԱՏՈՒԹԻՒՆ ԿԹՅԻ

Մարտի փոխադրուելով նախնի ժամանակները, երբ ամեն ազգերն հռապաշտ էին, կենթագրեմ թէ այն վայրկենին, յորում Յիսուս սկսաւ շրջել Յուդայի երկիրը իր կրօնքը քարոզելու համար, իրեն դէմ ելած ըլլայ աշխարհիս յարգած գիտութեանց մէջ խիստ ներհուն փոխադրուող մը, և զիցոք թէ այդ խնաստատելին հետ հետեւեալ իտասկոթութիւնը ընէ :

“Ի՞նչ է, կը հարցնէ Փիլիսոսփան Յիսուսին, ի՞նչ է քու դիտաւորութիւնդ, որ այդպէս կը շրջես Յուդայի քաղաքները եւ զիւղերը ժողովրդեան նոր վարդապետութիւն քարոզելու : — Իմ դիտաւորութիւնս է, կը պատասխանէ Յիսուս, բոլոր աշխարհի բարքը վերանորոգել, ամեն ժողովրդաց կրօնքը փոխել, անոնց Աստուածոց սրաշաւմուկները եղծել, որպէս զի ճշմարիտ Աստուծոյն երկրպագանեն, և որչափ ալ դարձանալի երեւի իմ ձեռնարկս, կը հաստատեմ թէ պիտի յաջգի :

“Բայց միթէ՞ դուն աւելի իմաստուն ես քան զՊիլատոս, աւելի՞ պերճախօս քան զՊրատոն, աւելի՞ ճարտար քան այն ամեն գեղեցիկ հանձարները, որոնք Հռովմայի և Յունաստանի փառքն են : — Իմ պարծանքս չէ մարդկոյն իմաստութիւն ուսուցանել, կուղեմ մանուսնդ արօցուցանել թէ այդ իմաստնոց պանծացեալ իմաստութիւնը յիմարութիւն է, եւ այն վերանորոգումը, զոր անոնցմէ ոչ մէկը համարձակեցաւ և ոչ իսկ քաղաքի մը մէջ փորձել, իմ կամքս է որ ամբողջ աշխարհի մէջ գործադրուի իմ և աշակերտացս ձեռամբ :

“Բայց քու աշակերտներդ իրենց տաղանդով, իրենց վարքով, իրենց արժանաւորութիւն եւ հարստութիւնովը

պիտի կարողանան տեսել այնչափ մեծ պայծառութիւն մը, որ գերազանցեն Զենոնեան, Ստոիկեան և Պերիպատիկեան ճեմարանները, պիտի կարողանան զիւրաւ իրենց ետեւ ձգել : — Ա՛յ, իմ առաքեալներս տգէտ և աղքատ մարդիկ պիտի ըլլան, ժողովրդական կարգէ և ազգաւ Հրէայ, որուն միւս ամենուն առջեւ անուանարկ ըլլալը յայտնի է : Եւ սակայն իմ կամքս է, որ անոնց ձեռքով յաղթահարեմ փոխադրանները եւ աշխարհի հզօրները, ինչպէս նաև բազմութիւնը :

“Սակայն գտնէ պէտք է որ Աղէքսանդրի և Կեսարու լեգեոններէն աւելի զօրաւոր խումբեր ունենաս, որոնք ահ և ստիպում տարածեն իրենց ընթացքին վրայ և ամբողջ ազգերը արբամադրեն քու ստիպումը առջև խոնարհելու : — Ա՛յ, ըսածներէդ և ոչ մէկը իմ խորհուրդիս մէջ չը կայ, էս կ'ուղեմ որ առաքեալներս դառնուկներու պէս քաղցր ըլլան, զիրենք սպաննելու պող թշնամեաց չի հակառակին, եւ իրենց մեղք պիտի սեպեմ, եթէ իմ օրինացս իշխանութիւնը հաստատելու համար սուր քաշեն :

“Ուրեմն յոյս ունիս թէ կայսերք, աւագանին, դատաւորք, կուսակալք իրենց բոլոր կարողութեամբը պիտի յաջողցնեն քու ձեռնարկդ : — Ա՛յ, ամեն իշխանութիւնք զէնք պիտի առնուն ինձի դէմ, իմ աշակերտներս յատեաններու պիտի մասնուին, պիտի ըլլան ատեղի, հարածեալ և մահուան դատապարտեալ, և ամբողջ 300 տարի ամեն ճիգ պիտի թափուի իմ կրօնքս և աշակերտներս արեան հեղեղներու մէջ խեղժելու :

“Բայց ի՞նչ հրապուրիչ զօրութիւն պիտի ունենայ այդ վարդապետութիւնը, որ կարող ըլլայ իրեն քաշելու բոլոր աշխարհ : — Իմ վարդապետութիւնը

նրս պատասխանեց Յիսուս, անըմբռնելի խորհրդոց վրայ պիտի ըլլայ, անոր բարոյականութիւնը մինչեւ ցարգ աւանդաւածներէն աւելի մտքաւոր պիտի ըլլայ: Աշակերտներս պիտի հռչակեն, որ ես մտաւորի մէջ ճնայ, թէ աղբատեւ վշտակիր կեանք մը վարեցի. և պիտի կարենան աւելցնել թէ ես խաչին վրայ հոգիս պիտի աւանդեմ, որովհետեւ այդ ասնջանքներով պիտի կրնաքեմ իմ վախճանս: Այս ամենք բարձրաստի պիտի հրատարակուի, ամենքք պիտի գիտնան այդպէս ըլլալը: Բայց և այնպէս, ինձ՝ որ քեզ հետ կը խօսիմ, որ մը աշխարհս երկրագագնթիւն պիտի մտաուցանէ:

«Ըսել է թէ պատասխանեց Փիլիսոսքան վերջապէս խղճալի ձայնով մը, դաւանի ունիս արեւմտեան իմաստունները լուսաւորել, տիրոններով հրդոյնները յաղթահարել, կրից դէմ պատերազմելով քաղմուտիւնը քեզի ձգել: Վերջոյ, նախատանայ, արհամարանայ և մահու խտտումամբ աշակերտներ ստանալ: Գլորել Ալեմկոտի բոլոր Աստուածները, որպէս զի անանց անը գու պաշտուիս: Իսկ կրես թէ պիտի խաչուիս իբրեւ չարագործ մը և իբրեւ անարգ գերի մը: Օ՛հ անգրք, քու խորհուրդդ ուրիշ բան չէ, բայց եթէ յիմարութիւն եւ հասարակութիւնը զայն ըստ արժանեցն պիտի դատէ ծանակելով: Այս ձեռնարկիդ յաջողութեան համար պիտի ե որ մարդկային բնութիւնը վերածաւրելի, և արգարեւ քու առաջարկած միջոցներով բարոյական աշխարհի վերակենդանութիւնը այնպէս անկարելի է, ինչպէս նիւթական աշխարհիս վերակազմութիւնը, մանաւանդ թէ քու ձեռնարկիդ յաջողութեանը հաւատ բնծայելէն աւելի գիւրին է կարծել թէ, մեկ խօքով կարող ես աշխարհը

վեր ՚ի վայր շրջել և հաստատութենէն արեւոտիլը և աստղերը վեր գլորել:

Ահա այսպէս կրնա՞նք, որ խորհած և խօսած ըլլայ Փիլիսոսքայ մի, ու բուն Յիսուս յայնտեմ ըլլար հեթանոսական աշխարհները քրիստոնէսութեան գարձներու դիտաւարութիւնը, և անտարակցս անոր յաջողութիւնը այնպէս անկարելի էր, որ անչաւա մարդկային բանականութեան նկատմամբ Փիլիսոսքային բաժը ըստ ամենայնի իրաւացի էր: Եւ արդ ճշգրիտապարտեցաւ այն, որ ըստ մարդկութեան անկարելի էր, մարդկային իմաստութիւնը ամօթահարեցաւ. աւմեն սովորական գաղափարները վեր ՚ի վայր շրջեցան. խաչի յիմարութիւնը արեւելեաց վրայ յաղթանակ կանգնեց. և այս իսկ է անմահ յիշատակարան ՚ի հաստատութիւն քրիստոնէսութե թէ երկնային է: Աւ այժմ ալ կրնանք հաւ կրնալ իմաստուն հեթանակի մը սա աւորինակ եւ անմտանոցի խօսքը «Ո՛վ Տէ՛ր, եթէ քրիստոնէսութեան յարելով ի խարուիմ, ապա դու զիս խարեցիր, որովհետեւ անոր վրայի նշանները քու ձեռքդ միայն կարող էր գրաւ մել. Տէ՛ր, եթէ պատրանք ինչ իցեն՝ ՚ի քէն եմք պատրեալք»:

ՅՈՒՆՍԻՆՈՒՍ

ՓՈՔՐԻԿ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆ ՄԻ

Ինչպէս առ հասարակ մատենագրութիւնը որ և իցէ ազգի մի մտաւոր և բարոյական զարգացման արգար կը շնորհէ, նոյնպէս կարող էմք ասել, որ Ազգի մը ըստ ըստ թուոյն առաւելութիւնը, կամ նուազութիւնը նոյն ազգին ընթերցանութեմ ճշգրիտ պատկերն է. վասն զի երբ ազգի մը ըստ ըստ ըստ թիւն կը շատնայ, ըսել է նոյն հաւ

մեծապատճառքը ընթերցողաց թիւն
եւս կը շատնայ, իսկ ընդհակառակին
որչափ կը նուազի կամ նուազ ընկի
թերթերու թիւն, նոյնչափ եւս ըն-
թերցողաց թիւն:

Յաւ է ասել, որ այս տխուր ճիշ-
մարտութիւնը մեր Ազգին մէջ ակնե-
րեւ կը տեսնուիք: Վասն զի Տաճկաս-
տանի մէջ հրատարակուած Հայ թեր-
թերու, թէ՛ օրագրաց, թէ՛ պարբե-
րական, թէ՛ շաբաթական և թէ՛ ամ-
սական թերթերու թիւն հասիւ տասն
և երկուքի կը հասնի, զոր երեք միլի-
ոն Հոյ — ժողովրդեան վերայ բաժնե-
լով՝ 250000 հոգեոյն մէկ թերթ կիշ-
նայ, որոց մէջէն առ առաւելը եթէ
1 առ 500 լրագիր կարդացող ընկի, մէկ
թերթն 500 հոգի կարդացող կուեն-
նայ, որով բոլոր թերթերու ընթեր-
ցողաց թիւն 6000 կըլլայ, այս խիստ
հարեւանցի հաշիւէն ակն յայտնի կը
տեսնուի մեր Ազգին մէջ ընթերցա-
նութեան ինչ վիճակ ունենալը: Ի
հարկ է ընթերցողաց նաւաղութեան
կամ առաւել եւս լաւ է ասել չ'էու-
թեան պատճառաւ խմբագիրներն նիւ-
թականապէս կը առժեն: Մասամբ
այս նիւթական տուժն է պատճառ,
որ շատ թերթերու հրատարակ գալը
և անցայտիլը մէկ կըլլայ:

Ի՞նչ է սորա պատճառը. — Սոյն
հարցի լուծման մէջէ բուն նկատողու-
թեան կէտը: Մեր Ազգի նկատմամբ
Հոյ — լրագրաց գիտաւոր պորտուռ-
ութիւնն է ընթերցանութեան ճա-
շակն արթնցնելով ընթերցասիրու-
թիւնը տարածել իրենց բազմակողմանի
պարունակութեամբ, երկրորդ՝ որ ա-
ռաջնէն կը հետեւի, Ազգին յառա-
ջագիմութեան նպաստել լաւը և լաւ-
աւոր խորհուրդներով: Նրբ լրագիր-
ներն սոյն երկու էական յատկութիւն-
ներն ունենան, այն ատեն անպատ-

ճառ հասարակութիւնն եւս մեծ սեր-
ունենալով լրագրաց վերայ պիտի բա-
ջալերէ լրագրութիւնն: Քանի որ հա-
սարակութիւնն սեր եւ համարմունք
չունի առ լրագրութիւնն, ըսել է որ՝
լրագրութիւնն եւս վերոյնշանակեալ
երկու յատկութիւններն չունի, եւ
իրօք եթէ նկատողութեան առնուիք
լրագրաց պարունակութիւնը (քիչ բա-
ցառութեամբ) կտոր մի քաղաքական,
զոր Ներուպական թերթերէն կը քաղեն
և որ ոչ այնչափ ազգի յառաջագիմու-
թեան կը նպաստէ. կտոր մի եւս ազ-
գային, այն եւս շատ քիչ անգամ իրմէ
բազրական յոգուած է, այլ միշտ մտու-
նուոր անձանց նամակներ, որք աւելի
անձնականութեան քան թէ ազգայ-
նութեան պատկեր կը կրեն. ահաւա-
սիկ այս է լրագրաց պարունակութիւ-
նը, որով անկարելի է ճաշակ արթնե-
ցնել և ընթերցասիրութիւնը ընդ-
հանրացնել: Սակայն դարմանալի է, որ
Հոյ — լրագրութիւնն փոխանակ իւր
թերութիւններն զգալու և ազգօգուտ
ուզութիւն մի աւնելու, միշտ արբ-
տունը կրնէ հասարակութեան վերայ,
որոչէս թէ Հասարակութիւնը չը քաջու-
րերել զինքը, աւելի Ներուպական թեր-
թեր կը կարգայ, քան թէ Հոյ — լրա-
գիրներ, եթէ յաճախողներ շահելու
յատկութիւն չունեցող փերուզակը
արանջալու իրաւունքսնի, նոյնպէս մեր
լրագիրներն:

Եթէ լրագրաց ըրած արտունչն
հասարակութիւնն ընէ, աւելի իրա-
ւունք ունի, վասն զի լրագիրներն մտու-
նալով իրենց կոչու մն և պարտաւորու-
թիւնը, մասնաւորաց խնկարկունք
դարձած են, մասնաւորապէս վերջին
տարինբուն մէջ շատերն իրենց ծայրա-
յեղ ազխութեամբ ընդդէմ կրօնի,
բարոյականութեան և իգական սեռի
գատախարակութեան վերաբերեալ սոյն

պիտի գայթակղական հրատարակութիւններ ըրին, որոց վերայ հասարակութեան զըւանիքը գրգռեցաւ, քան թէ ճաշակն արթնցաւ և այս խել է պատճառը, որ լրագրաց ամենօրեայ արտուէնքներն աղարդ խն կը մնան, ինչպէս մոլի և անպարկեշտ քարոզի մը սպառնալից քարոզներն :

Լրագիրներն կը արանջան, որ իբրեւ թէ հասարակութիւնը իւր պարտաւորութիւնը չը ճանաչեր չը քաջալերելով զիրենք. սակայն կը մտնան, որ հասարակութիւնը այդ պարտաւորութեան փոխորէն իրաւունք մի ևս ունի, զոր լրագիրներն կը ժխտեն ընդդէմ իրենց պարտեաց: Իրաւանց ժրխտումն պարտեաց զանցառութիւնի են թագրէ. եթէ կ'սեղեն լրագիրներն, որ հասարակութիւնը իւր պարտաւորութեան մէջ կը թերանայ, թող նախ իրենք իրենց պարտիքը ճանաչեն հատուցանելով հասարակութեան իրաւունքը, այսինքն իրենց գրիչը թող նախ յառաջագիմութեան նուիրեն. թող ջանան նախ իրենց լուրջ յոգուածներով հասարակութեան մէջ ընթերցասիրութիւնը տարածել, այնուհետեւ իրենց հասարակութենէն ակնկալած օգնութիւնը ինքնին կը գայ:

Եթէ հասարակութիւնը քանդուտէր լրագրաց մասին, իրաւունք ունէր. որովհետեւ նա իւր քրտանց վաստակը որ կը տայ, ոչ թէ մասնաւոր անձինք շահելու նպատակաւ, այլ Ագգին յառաջագիմութեան փոքրիկ նշնպատ մի առնելու համար. սակայն դժբաղդաբար այսօր հասարակութեան քրտանց վաստակը աւելի Ագգին աղէտից վերայ աղէտք բարդող մի քանի թերթեր կը բուծանէ (խօսքըս ամենուն չը պատկանիր) և զայս հասարակութիւն չգար մեծ մասամբ. եթէ զգար անբաւական պէտք էր լի

նիլ ներկայ լրագիրներէն. այդ անբաւականութիւնը թերեւս ընտիր և ազգօգուտ թերթերու թիւն աւելցոյնէր: Իրաւ է, որ Հասարակութեան խիստ փութիկ մասն Հայերէն լրագիր կը կարգայ, մէկ մասն աւելի օտար ազգայ թերթեր կը կարգայ, խել խիստ մեծագոյն մասն բնաւ չը կարգար. որովհետեւ ընթերցանութիւնը յարգել արժէք չէ ստացած ցարդ. նոցա համար. որովհետեւ լրագրութիւնն ոչ մէկ ժամանակ այս մասին հասարակութեան յորդոր չէ կարգացած, ոչ մէկ ժամանակ ընթերցասիրութեան օգուտներն չէ բացատրած. եթէ ընէր այս ամենը, այսօր փոխանակ հասարակութեան մեծագոյն մասին փութագոյն մասն, կամ բնաւ մէկը չը պիտի գանուէր լրագիր չը կարգացող: Հասարակութեան այն մասն, որ Հայ-լրագիր կը կարգայ, ոչ թէ նոր գաղտնիքներ, սեղեկութիւններ ստանալու համար, այլ փայրիկնական զուարճութիւն մի ունենալու համար, և այս է պատճառը որ զավելչտական թերթի մը տպերն աւելի հաճութիւն կը կարգան քան թէ լուրջ իմաստասիրականն ու ծանր բարոյական յոգուածներն: Աւտօի այս պատճառաւ բնաւ չը կարգացողներն աւելի լու կրնեն, քան թէ յառի ճաշակաւ կարգացողներն:

Արդ՝ քանի որ լրագիրներն մեծ մասամբ այս եղանակաւ Ագգին օգտակար չեն եղած, պէտք է օգտակար լինելու գիրք մը առնեն. պէտք է մի միայն թերթ լեցնելու սկզբունք թող լով Ագգին յառաջագիմութեան համար գրեն. պէտք է փոխանակ հասարակութենէն օրանջալու, ջանան ընթերցանութիւնը տարածելով սիրելի առնել թերթերն յայս Ագգին. ջանալ օգտակար լինիլ Ագգին լուսաւոր և տղամտ հրատարակութիւններով:

անշուշտ այն ատեն հասարակութիւնին եւս չը պիտի պանայ իւր քաջութիւնը :

Գ . Ս . Խ .

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ

Յունիս 27ին գիշերը տեղւոյս Վսեմ. Կառավարիչ Քեամիլ բաշան քաղաքիս բոլոր Հիւպատոսներն ու Գաղղեացոց Պէրուժի ընդհանուր Հիւպատոս Պ. Ռոսթամը ընթրիքի հրաւիրեց Կառավարութեան պալատը : Պ. Ռոսթամն նոյն գիշեր ժամը 5ին մեկնեցաւ դէպ ՚ի Յոպպէ իւր պաշտօնատեղին ՚ի Պէրուժ երթալու որուն ընկերացած էին մի քանի Զապթիկներ և նոյա հարիւրասկառը : Վսեմ. Կառավարիչը ՚ի պատիւ Պ. Ռոսթամի իւր ձին առած էր մինչեւ ձորաբերանը (պապ իլ վաս) բառած տեղը տանելու :

— Ամսոյս 6ին Աւստրիաց Կայսեր և Լունգարացոց Արքային ծննդեան տարեգարծի առթիւ տեղւոյս Զանաքիտանք Սուրբ Յարութեան մէջ իրենց եկեղեցին ձայնաւոր պատարագ մատուցին ՚ի ներկայութեան նոյն տէրութեան Ընդհ. Հիւպատոսին և փոխ Հիւպատոսին և բոլոր բրիտանաց հիւպատոսաց, այս առթիւ Աւստրիացի Հրէայր եւս իրենց աղօթարանին մէջ Կայսեր կենաց բարեմաղթութիւններ լնելէ վերջը գիշերն եւս ճրագավառութեան հանդէս կատարեցին :

— 10ին, ժամը 6ին տեղւոյս Պարսից Հիւպատոսը առաջին անգամ իւր Տէրութեան գրոշակը բացաւ ՚ի ներկայութեան Վսեմ. Կառավարչին եւ բոլոր Հիւպատոսաց : Նոյն օրը Բ. Գըրան հրամանին համեմատ քաղաքէս մեկնեցաւ Սողովմանեան Տաճարի նորոգութեան Տեսուչ Գուարէթ պէյը :

որոց պաշտօնն առ այժմ Կառավարութիւնը կը կատարէ :

— Սուրբ Ծննդեան այրին մէջ պատահած վերջին դէպքին ժամանակ նախորդ Վսեմ. Կառավարիչը հրաման ղրկած էր երեք ազգաց, թէ առ ժամանակ մի դազարին Ս. Ծննդեան սխաղարդ մեծ գաւթին մէջ սովորական հանդէսներով անցնիլը մինչեւ վէճերուն կարգադրուիլը : Ինչպէս ուրիշ քանի մի տօնի օրեր, նոյնպէս և Վերափոխման օրը սովորութիւն կայ մեզ ՚ի հնուց անտի որ Տեսուչը ժամարար լինելով ՚ի լրանալ Ս. Պատարագին հանդիսիւ նոյն սխաղարդ գաւթէն կարգալով կը տանին իւր խուցը : Վէճերը խաղաղելէն յետոյ, ինչպէս ուրիշ ազգեր, նոյնպէս մեր Ազգն ալ ուզեց այս սովորութիւնը կատարել . Յշնդ Լատինաց հետ ունեցած վէճերնի պատեհ առիթ համարելով Կառավարութեան ձեռք ուղեցին այս անգամ մեզ եւս արդիւնէ մեր այս սովորութիւնը կատարելէ, ըսելով թէ « նոյն գաւթի իրենց կը վերաբերի, ուստի Լայր իրաւունք չունին անկէ հանդիսի անցնելու » . Ս. Պատրիարքը բողոքեց և իւր իրաւունքը հրովարտաներով հաստատեց, թէ Յունաց հետ հաւատար իրաւունք ունիմք սուրբ Տեղեաց մէջ մեր Հայաստանեայց Եկեղեցոյ սովորական ամեն արարողութի կատարելու . Տեղւոյս Միւթասարըք Վսեմ. Քեամիլ փաշայն հրովարտաները քննելով և Քեթիկէն մի բնակիչներէն և Լատինաց վանքէն ստուգելով որ Հայոց իրաւունքն է այս, եւ վերադառնալ վաւերացնելով մեր այս իրաւունքը հրաման ըրաւ . և ամսոյս 26ին Տեսուչը ժամարար լինելով Ս. Պատարագէն վերջը նոյն սխաղարդ մեծ գաւթին մէջէն բառ իրաւանց և բառ վաղէմի սովորութեանց՝ կարդալով և

Հանդիսիւ գնաց խոսք , ժախանակ
Վերափոխման աւար :

— Ժառանգաւորաց դպրոցիս ա-
շակերաներէն Յովհաննէս Խաչատու-
րեան Մարտիոսիս իւր դպրոցական
կենաց շրջանին մէջ անկարգութիւն-
ներ ըրած լինելով և ամեն կարելի մի-
ջոց գործողութիւն զերջը տակաւին
անուզողոց գանուելով ամսոյս 26 ին ևս
խիստ յանդուգն եւ արաշնորհ մէկ
գործոյն համար պատժուելով արձակ-
ուեցու որոշմամբ Ուսումնական Խոր-
հրդոց և համութեամբ Ս. Աթոռոյս
Տնօրէն Ժողովոցն : Սոյն Աշակերտը
աղքատ ծնողաց զաւակ և յետին աւ-
տիճան թշուառ վիճակի մէջ եղած ա-
տեն Բերայի Թաղական Խորհրդոց միջ-
նորդութեամբ և յատուկ խնդրանք
բնդուեալով էր Ս. Աթոռոյս Ժառ-
անգաւորաց Վարժարանին մէջ 1869
Պեկ. 21. որ տանն հազիւ քիչ մի հա-
տարակ ընթերցմանը գիտէր , այն ա-
տենէն զարգ շքս տարիի մօտ ամեն
խնամք բնդուեցելով և բաւական ու-
սումն տանելով հանդերձ տակաւին չէ
կարողացած իւր մանկութեան մէջ սը-
վորած անկթուլութիւններն ու բխր
գաժանութիւնը ուղղել եւ բարոյա-
կանը կարգաւ արել , ՚ի դերեւ հանե-
լով գոյրոցական տեսչութեան և ինտ-
մակալաց բարձր քանքերը : Անմիտ պա-
տանին օրինաց և կանոնաց ներհակե-
լով , իւր բարւոյն եւ ուղղութեանը
համար սահմանուած զրուշութիւն-
ներն արհամարհելով , գայթակղու-
թիւն եւ գրգռութիւն սերմանելով
Թերեւս կարծեր է որ լաւ բան մի բ-
րած կը լինի . սակայն կարելի է այժմ
կը յիշէ իրեն արուած խրատներուն
չօրութիւնը և կը համազուի որ խիստ
անարատիւ էր իւր բունած միջոցը , կը
գաց որ անարգութիւն եղաւ իւր ան-
ձին , սպերակտ գանուեցաւ իւր իւր

նամակալոց գէմ , նոյս սիրտը կարեւ-
զէր խոցեց իրենց բոլոր աշխատու-
թիւնն այսպէս փճայնելով . եւ յու-
սաղի է սակայն որ այս գէտքը իրեն
խրատ լինելով կը սանձէ իւր կիրքե-
րը և իւր ապաւայ կենաց յաջողու-
թեան և բարօրութեան համար կուղ-
ղէ իւր վարքը :

— Տ՛ղայի Յոյն տակաւին ան-
հաշտ են , բայց նոյս Միաբանութիւ-
նը դիրենք առ ինքն յանկուցանելու մի-
ջոցներ կը գտնէ : Մի քանի աղքատ
Յոյն մօտ օրերս Միաբանութեան
հետ հաշտուեցան . սոցա հաշտու-
թիւնը ժողովրդեան խռովութեա-
նը պատճառ եղաւ . քանզի ամ-
սոյս 26 ին մեծ բաղմութիւն Ս. Յա-
րութեան արտաքին գաւիթը կը պա-
տահին հաշտեալ մասին եւ կ'ըստին
զերենք նոյն գործին համար ծագել .
նորս քանի մի անարգական խօսքերով
կը պատասխանեն թէ , « Օր մի եւս
իրենք ալ կամոց սկամոց սլախ ստխո-
ուին հաշտուիլ » : Այս խօսքերէն
գրգռեալ կը յարձակին իրարու վերայ
եւ կուուց ժամանակ կին մի ազգրէն
անմասա կերպիւ դանակի հարուածով
կը վիրաւորի . իսկոյն ոստիկանութեան
միջամտութեամբ կը խաղաղին , որոց մի
քանին զարգ բանան են , նոյն օրը յե-
րեկոց Յունաց Թաղը զօրքեր շփելով
կը հսկէին :

— Ք ուղարիս Տաճիկներն ալ յուգ-
եալ են . ժողովրդեան մեծ մասը եր-
կուքի բաժնուած՝ մին զներկոց կը
նապեալը (Միւֆթին) երիտասարդ լի-
նելուն համար սաշտանէ դադրեցնել
կուղեն իսկ միւս մասը մնալը կը կա-
մին . թէ եւ հակառակ կուսակցու-
թեան կողմէն զրկուած տեղեկագրոյն
համեմատ հրաման եկած է դադարե-
ցնելու . սակայն դեռ կուսակցու-
թիւնը անհամաձայն կը գտնուին :

Յ Ա Ն Կ

Օ Գ Ո Ս Տ Ո Ս

Ազատութեան յըայ ակնարկ մի	169
Երազ	171
Առողջական . (Շարունակութիւն)	173
Դատարարութիւն կանանց . (Շարունակութիւն)	182
Հրաշարի հաստատութիւն կրօնի	187
Փոքրիկ նկատողութիւն մի	188
ԺԱՄԱՆԱԿԱԳԻՆԱԿԱՆԲ	191

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆԲ

- Ա. Սիօնը ամեն ամիս կը հրատարակուի 24 էրեսի բաղկացեայ մէկուկէս աւթածաղ թղթով :
- Բ. Տարեկան գինն է երկու արծաթ Մեծփայեի, հանգերձ Խանազարհի ծախքովը կանխիկ վճարելի :
- Գ. Չստ տեսարակ առնել աւղողը, պէտք է ամեն մէկ տեսրին շորս գահեկան վճարել :